



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԳ ՏԱՐԻ - ՄԱՐՏ 1937



13^{me} Année - Mars 1937

Խմբագրական

Լուսագոյն յարութիւնը

Յ. Ն. Ղ.

Հոգ. կեանք

Քրիստոսի համար չարչարուելու տռանձնաշնորհութիւնը

Ասիայի եօթը եկեղեցիները

Վեր. Ա. Օ. Փափազեան

Շնորհաց ծովէն

Տէրոջ այցելութիւնները

Վարդանիշ Ապաճեան

Կենաց ածուներէն

Ծարուէն մեռած

Սերտողութիւն

«Իմ Տէրս եւ իմ Աստուած»

Երջանիկ յոյս

Վերջին իղձը

Սամուէլ Պ.

Պատմական

Մեծ դէմքեր ու դէպքեր...

Գ. Գ. Խաչիկեան

Մանկանց շինակ

Համբարութեան վախճանը

Թարգ. Պղտիկներու Բարեկամուհին

Երգ. պայփարի

ԲԱՆԲԵՐ հոգևոր ամսածերներ Թէեւ փրանսիայ Աւետարանա-
կրան եկեղեցիներու, պաշտօնածերներն է. այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ձյմարտութիւնը
կը փնտրեն եւ ծարար կըրգան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեամբ: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, ուստի ձյմաքիտ չԲանին
ներկայացուցիչն ալ չձանձնար ու եւ յարանուանութիւն մը,
հոգաւ մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերներ երկու լեզուներով կը հնարարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքին դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատր. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ Թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարրեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է:

ԺՄՁԷՑ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որտ ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգևոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

ՊԱՍՏՈՒՄՆԱՆ

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկանէ կանգնիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 13 Ֆրանք
Արտասահման Տոլար 1. 25

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 60 սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ **ԹՈՒՐԿԵՐԷՆ** միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման Տոլ. 1. 75
(Դիւրութեան համար travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ ղրկուիլ):

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ դրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Մանուշակ գրամական առաքումի առթիւ Հաճեցէք մանտալին վրայ չմոռնալ գրելու
H. N. Ghazarossian, (Rédacteur) C. C. No. 182.53 Marseille

համար թէ հոս կարգացածդ որքան ճշմարիտ է: Մի՛ ըսեր «կարելի չէ որ ճշմարիտ ըլլալ, այս-քան որ հիանալի է այս բանը» հապա քննէ եւ հաստատէ զայն: Ծշմարիտ հաւատացեալ մը, ճշմարիտ քրիստոնեալ մը եղիլ: Ընդունէ՛ Տէր Յիսուսը իբր ճշմարտապէս քու փոխանորդդ, քու Փրկիչդ, եւ շնորհակալ եղիլ սիրոյ Աստուծէն այսքան հիանալի փրկութեան մը համար: «Ահա Աստուծոյ Գառը որ աշխարհի մեղքը կը վերցնէ» Յովհ. Ա. 29:



Սոյն Թերթիկէն ունենալ եւ ցրուել ուզողներ Թող բարեհասին դիմել Բանքեր հոգեւոր ամսաթերթի խմբագրութեան եւ իրենց պիտի ղրկուի ուզուած քանակով:

Հասցէ.— Panpère, c/o H. N. Ghazarossian
7, Rue Papère, Marseille (France)

Թիւ 6

Imp. Y. Armen & Cie

ՇՆՈՐՀՈՒԱԾ ՊԱՐՏՔ ՄԸ

Ամէն պարտք բեռ մըն է: Շատ բնական է որ շատեր այս բեռան տակ մտնելէ կը խորշին: Անոր հակառակը՝ պարտքի տակ մտնողներ խոհեմութիւն ըրած չեն ըլլար:

Իր ազնիւ նկարագրովը համբաւ հանած ուսուցիչ մը հիւանդ ինկաւ ինք եւ իր ընտանեաց անդամները միեւնոյն ատեն: Երկար օրեր անոնք ստիպուեցան լաւ բժիշկէ մը խնամուիլ: Կասկած չկար թէ այս դժբաղդութեան պատճառած ծախսերը շատ մեծ պիտի ըլլաին:

Այս քաջ ուսուցիչը բժիշկին իր վճարելիք այցագինները հաշիւ ընելով մեծ մտահոգութեան մէջ էր, եւ սոսկումով կ'երեւակայէր ու վախով ալ կ'սպասէր զալիք հաշուենթին:

Օր մը վերջապէս իր բժիշկէն ընդունեց պահարան մը, որ ըստ իր կարծիքին պարունակելու էր իր վախցած պարտաթուղթը: Խեղճ մարդը այս պահարանը նախ մէկդի դրաւ: Շատ մը օրեր չհամարձակեցաւ բանալ զայն, վախալով իր երեւակայած մեծ գումարէն: Վճարելու անկարողութիւնը հետզհետէ աւելի մեծ անձկութիւն կը պատճառէր իրեն:

Այս անսրոշութիւնը վերջապէս այն աստի-

ճան անտանելի դարձաւ իրեն, որ ալլեւս որոշեց պահարանը բանալ: Ի՞նչ մեծ եղաւ իր զարմանքը երբ փոխան բժիշկին այցելութիւններուն, դեղերուն երկար ցանկին՝ գտաւ պարտաթուղթ մը օրինաւոր կերպով վճարուած: Բարի բժիշկը իր հիւանդին հանդէպ այնքան ցաւ զգացած էր, որ անոր պարտքը ամբողջութեամբ շնորհած էր: Ուսուցիչը այնքան յանկարծակիի եկաւ, որ նախ իր աչքերուն չէր կրնար հաւատալ, ու կը մտածէր. «Կարելի չէ որ ճշմարիտ ըլլայ այս, այնքան որ հիւանդի է»: Յետոյ նորէն ականարկ մը նետելով թուղթին վրայ ստիպուեցաւ ուրախ եւ երախտապարտ սրտով համոզուիլ թէ ճշմարտապէս վճարուած ութ մըն էր իր ձեռքը բռնածը:

Այսպիսի վարանումներով է որ մարդիկ շատ յաճախ կը լսեն Աւետարանին պատգամը:

Աստուծոյ հանդէպ անհաշուելի չափով պարտական ես: Քու մեղքերուդ զումարը օրէ օր աւելցած է հսկայ համեմատութիւններով եւ դեռ օրէ օր կ'աւելնայ: Յայտնի է թէ դուն երբէք պիտի չկարենաս այս գումարը վճարել: Այս հաստատութիւնը քու խղճիդ վրայ ծանր չի՞ ճնշեր: Քեզի չէ՞ պատահած որ մտածես թէ

ուշ կամ կանուխ հաշուեյարդարի օրը պիտի հասնի:


Ասոր հետ մէկտեղ, քեզի կը բաւէ Ս. Գիրքը բանալ, հոն տեսնելու համար թէ քու պարտքիդ թուղթն ալ վճարուած է: «Եւ որովհետեւ հատուցանելու կարողութիւն չունէին, երկուքին ալ շնորհեց». Առկ. է 42: Որդին մարդոյ, Յիսուս Քրիստոս՝ եկաւ թողութիւն քարոզելու, նա եկաւ «Որ իր անձը ամենուն տեղ փրկանք տայ», Ա. Տիմ. Բ 6:

Յիսուս Քրիստոս քու պարտքդ վճարելու համար աշխարհ եկաւ, վասն զի Աստուած գիտէր թէ դուն ինքիրմէդ զայն բնաւ չէիր կրնար վճարել: Յիսուսի դուն ինքզինքդ փրկելու անկարող ես. քու փրկագործութիւնդ Ասոր միջոցաւ կատարուեցաւ: «Ամէն բան կատարուեցաւ». այս եղաւ Յիսուսի խաչին վրայ տրտասանած վերջին խօսքերէն մին: Քեզի կը մնայ միայն քեզի շնորհուած այս ստացագիրը ձեռք առնել, վստահ ըլլալու համար թէ պարտքիդ հաշիւը կանոնաւորապէս եւ վճռականօրէն փակուած է Փրկչին ձեռքով:

Յանձն առ Աւետարանը կարդալ, տեսնելու

Արձնցի՛ր դուն
որ կը յնմանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի քոյս պիտի
տայ:
Եփես. Ե 14

ԲԱՆՔԵՐ



Ուրեմն ա՛յ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մոռնաւ, խոտմոռնքէն որ մեզի մ'նացեր է,
մեզմէ մէկը գրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ստունէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԳ. ՏԱՐԻ

ՄԱՐՏ 1957

ԹԻԻ 5



ԼԱՒԱԳՈՅՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Որպէսզի լուսագոյն յարութեանը հասնին: Երբ. ԺԱ. 35

Մինչ Զատիկը կը մօտենայ, մեր երեսակա-
յութիւնը յակամայս թոխչք տալ կ'սկսի դէպի
այն դերեզմանը, ուրկէ մեզի կը շողայ յարու-
թեան առաւօտեան յուսոյ արշալոյսը: Այդ տե-
սարանին առջեւ մեր որտեղը կը խայտան եւ
մեր բերանները կը բացուին օրհնաբանելու զԱյն
որ Իր յարութեամբ մշտնջենական դռները բա-
ցաւ մեզի, յաւիտենական արժէքներով:

Յիսուսի յարութեան տարածականութիւնը
անցեալին թերթիս էջերուն մէջ շատ մը առիթ-
ներով նկատի առած եւ տեսած ենք թէ անոր
արժէքը ոչ միայն Քրիստոսի անձին, զործու-
նէութեան եւ Անոր արժանահաւատութեան հա-
մար մեծ կարեւորութիւն ունի, կազմելով այդ
զործունէութեան կնիքն ու թագը՝ հապա ունի
տիեզերական ոյժ եւ արժէք Իրկինքի բնակիչ-
ներուն, անցեալի մարդկութեան ինչպէս նաեւ
մեզի համար եւ է զբաւական մը մեր ապագայ
կեանքին ու զործունէութեան:

Ուրեմն կ'արժէ որ այս յարութեան տիեզե-
րական ուժին մէկ յայտնութիւնը առնենք այ-
սօր եւ լուսաբանուինք, մխիթարուինք, քաջա-
լերուինք եւ ազդարարուինք մեր փառաւոր կո-
չումը հաստատելու համար:

Մեր խորհրդածութեան նիւթը պիտի ըլլայ
լուսագոյն յարութիւնը, որ արդիւնքն է Քրիստո-
սի յարութեան:

Ս. Գրքին մէջ մարմնոյ յարութիւնը երեք
տեսակէտով գիտենք: Զանազան մարդիկ անց-
եալին մէջ յարութիւն առած են եւ ուրիշ երկու
դասակարգի մարդիկ ալ յարութիւն պիտի առ-
նեն: Առաջին դասակարգին կը վերաբերին մի-

այն սակաւաթիւ անձեր: Անձեր, որոնք Հին Կը-
տակարանին մէջ մարգարէներու միջոցաւ վերս-
տին ապրեցան: Տէր Յիսուս ալ Իր հրաշագործ
զօրութիւնը յայտնաբերեց Յայրոսի ազջկան վը-
րայ, Նայինի մեռեալ երիտասարդին եւ Հորս օրէ
ի վեր գերեզմանը դրուած Իր բարեկամին՝ Ղա-
զարոսի վրայ: Կան նաեւ երբ. ԺԱ. 35ի յա-
րուցեալները, ինչպէս նաեւ Այծեմնիկ ու Եւտի-
քոս, որոնք առաքեալներու միջոցաւ կեանքի
կանչուեցան: Այս յարուցեալները երկրային
կեանքի կանչուեցան ապրելու իրենց տկար մար-
մինին մէջ: Անոնք ապրեցան ժամանակաւորապէս
եւ կրկին մեռան, եւ իրենց մարմիններն ալ
տարրալուծուեցան, հողը հողին դարձաւ: Առաք-
եալը բնականաբար այդ յարութեան չակնարկեր
երբ կ'ըսէ լուսագոյն յարութիւնը:

Երկրորդ դասակարգի յարուցեալներուն կը
հանդիպինք Յայտնութեան Ի. 12-15ի մէջ: Այս
յարուցեալներուն համար ճշմարտութեան խօս-
քը կ'ըսէ. «Տեսա՛յ պզտիկ ու մեծ մեռելները ո-
րոնք Աստուծոյ առջեւ կայնած էին... եւ ծովը
իր մէջի մեռելները տուաւ եւ մահը ու դժոխքը
իրենց մէջի մեռելները տուին ու ամէն մէկը ի-
րենց զործերուն համեմատ դատուեցան... եւ ով
որ կենաց զրքին մէջ զրուած չգտնուեցաւ, կը-
րակի լիճին մէջ ձգուեցաւ»: Այս յարութեան
մէջ մաս ունին մեռելները, այսինքն ամբարիշտ-
ներն ու մեղաւորները, որոնք մարմին կը հագ-
նին (այս մարմինին նկարագրութիւնը Ս. Գրքը
զանց կ'ընէ) յաւիտենական դատապարտութեան
համար: Այս յարութիւնն ալ դատապարտութեան
յարութիւն ըլլալուն համար բնականաբար եւ ա-

ւելի զօրաւոր փաստով լաւադոյն յարութիւն չի կրնար սեպուիլ:

Երբ ուրիշ դատակարգի յարուցեալները Տէրոջ մով ննջողներն են, այսինքն հաւատացեալները: Այս յարութիւնը վերոյիշեալ երկրորդ յարութեան հազար տարի առաջ տեղի կ'ունենայ, որուն կապուած է ողջ մնացող հաւատացեալներու յափշտակութիւնը: Պզտիկ շեղում մը ընելով այս յափշտակութեան, կը կարգանք Բ. Կոր. Ե. 4ի, ինչպէս նաեւ Ա. Թեա. Դ. 16ի մէջ թէ ողջ մնացող հաւատացեալները աչք գոցել բանալու մէջ պիտի կերպարանափոխուին իրենց ապականութիւնէն, որպէսզի ազատագրուած ըլլալով երկրային կաշկանդումներէ՝ նոր մարմին մը հագած՝ յարմարին երկնային բնութեան եւ միջավայրին: Այսպէս ալ Տէրոջ մով ննջողներու մարմինները, որոնք հողի վերածուած են կամ տարրալուծուած, յարութիւն պիտի առնեն փառաւոր կերպարանքով: Այս յարութիւնը բնական կերպով օղակուած է Քրիստոսի յարութեան հետ: Ինչպէս որ Աստուածորդին իշխանութիւն ունէր որ Իր մեռած մարմինը զերեզմանին մէջ դեռ չապականած յարութիւն պիտի առնէր, նոյնպէս ալ ինք մեզի իշխանութիւն տուաւ հագնելու բարձրացող Փրկչին կերպարանակից փառաւորեալ մարմինը:

Աստուած չուզեր հաւատացեալին մերկութիւնը (Բ. Կոր. Ե. 4) այսինքն անկերպարան եւ ստուերի գոյութիւն մը քաշքշելը, հապա որ անիկա թաղաւորական հանդերձ հագնի, առանց որոյ անիկա նոր միջավայրին չպիտի յարմարէր: Երկնաւոր կեանքն ու փառաւորեալ մարմինը բնական օրէնքներով իրարու հետ ձեռք ձեռքի կ'երթան եւ յարուցեալ մարմինը բոլորովին բաւարար է երկնային կեանքի ապրելակերպին ու հոգեւոր օրէնքներուն:

Երկնային կեանքը նկարագրել եւ բացատրել մարդկային լեզուով բացարձակապէս անկարելի է: Այն բաները զոր աչք չէ տեսեր եւ ականջ չէ լսեր ու մարդու սրտին մէջ չէ ինկեր, Աստուած զիրքը սիրողներուն պատրաստեց, կ'ըսէ ճշմարտութեան Խօսքը, ուրեմն մարդու երեւակայութեան աւելի բարձր է Աստուծոյ փառքին նկարագրութիւնը: Հոն եղած բաներուն, լրուած խօսքերուն համար ալ Պօղոս առաքեալ կ'ըսէ որ անոնց մասին խօսիլ մարդու արժան չէ: Այս ցոյց կուտայ թէ հոն տեղը, միջավայրը, կեանքը, յարաբերութիւնը, զբաղումը այնքան զերիվեր է, որ մարդկային ամենասուր երեւակայութիւնն իրի չկրնար ըմբռնել եւ բառ ալ

չկայ մարկդային լեզուին մէջ, որ դայն ճշմարտապէս կրնայ նկարագրել: Ուրեմն մենք ալ բառերով այդ փառքը նսեմացնել չենք ուզեր: Միայն ուրախ ճիշ մը կ'արձակենք թէ այդ փառքն ու ուրախութիւնը մեզի համար է: Օր մը հան պիտի ըլլանք եւ յաւիտեանս Անոր հետ պիտի բնակինք: Այս է մեր բարձրագոյն նպատակը, այս է լաւագոյն յարութիւնը:

Բայց միթէ՞ կարելի է երեւակայել զայս: Տարբերութիւնը մե՞ծ է, անջրպետը լա՛յն է այս երկու կեանքերուն միջեւ: Այո, բայց ո՞վ կրնայ ժխտել թէ սա բարձրաբերձ լեռնելուն մէջ իր բոյնը շինող եւ ամպերն ու անոնց սրտումները արհամարհող, բարձրերը ճախրող եւ շա՛տ վերերէն, շա՛տ հեռուն իր որսը տեսնելուն պէս անվիհեր, նետի արագութեամբ անոր վրայ սուրացող օդին թաղաւորը արծիւը, աստե՞օք պզտիկ հաւկիթի մը մէջ կը գտնուէր, նոյնիսկ անտեսանելի մեծութեամբ: Շերամաբուծին քով զրտնուած էս, տեսած էս անոր թափած թութի ճիւղերուն վրայ տարածուած այդ որդերը, որոնք հազիւ իրենց տեղէն կը շարժին, անոնք քիչ վերջը թեւեր առած կը թռչտին, բոլորովին փոխուած կերպարանք ցոյց տալով: Որքա՛ն աւելի կարելիութիւններ կան մարդուն մէջ: Միտքդ բեր այն յառաջդիմութեան եւ կատարելութեան իդէալները որոնք անոր մէջ ծրարուած են: Տէրը գիտէ թէ ինչե՛ր պիտի ընէ մեր վրայ եւ մեզմով: Մենք ամէն օր կը հառաչենք Աստուծոյ որդիներուն ազատագրութեանը համար: Ուրեմն քանի որ այդպէս է ինչիւրը, ի՞նչ կը մնայ ընել մեր կողմէն: Աստուծոյ գաւակը որքան շատ մատերմանայ անհունին, որքան շատ զբաղուի անով, այնքան պատեհութիւն կ'ունենայ զինքը երկրի կապող կաշկանդիչ կապերը արձակելու: Երբ թխտուած հաւկիթին մէջ թռչունը կատարելագործուած է, իր տկար կտուցով կը զարնէ պատեանին, մայր թրուչունը կը լսէ եւ ընթացք կուտայ իր իղձին:

Ով Աստուծոյ գաւակներ, մեր առջեւ զեղեցիկ յոյս մը ունինք, կ'արժէ անոր հասնելու համար ամէն զոհողութիւն ընել: Յարութեան զեղեցիկ առաւօտէն առաջ չարչարանաց շարաթը պէտք էր անցնէր, և մեզի համար ալ... որքան դժուակ ըլլան մարմինն հանդէպ մեր պայքարները եւ որքան յաջող ըլլան մեր յաղթութիւնները մեզքին վրայ, այնքան լուսաւոր պիտի ըլլայ յարութեան առաւօտը մեզի համար:

Յարութեան առաւօտը մեզ լաւագոյն յարութեան յուսով թող լեցնէ եւ այդ յոյսը զմեզ Քրիստոսի սրբութեան առաջնորդէ: Թ. Ն. Ղ.



ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԱՐ

ՉԱՐՉԱՐՈՒՆԵԼՈՒ

ԱՌԱՆՋԱԾԵՆՈՐՀՈՒԹԻՒՆԸ

(Փիլ. Ա. 29,30)

«Վասնզի ձեզի տրուեցաւ Քրիստոսի համար՝ ոչ թէ միայն Անոր հաւատալ, հապա Անոր համար չարչարուիլ ալ»։ Այս խօսքէն կը տեսնենք թէ առանձնաշնորհութեան աստիճաններ կան։ Ամենագեղեցիկ պատկերը հունձքի դաշտին վերայ ձեռք կը բերուին։ Աշխարհ երջանիկ կը համարէ այն մարդիկը որ ազատ, հանգիստ ու անվիշտ կեանք մը կ'ապրին ու որչափ որ մօտ գան այդ իտէալին, այնքան բարեբաղդ կը նշկատուին։ Սակայն Տէրոջը թագաւորութեան մէջ հանգստութիւնը երկրորդական տեղ կը բռնէ եւ անոնք երջանիկ կը համարուին որ Անոր համար չարչարուելու արտօնուած են։ Երբեմն լսած եմ մարդոց երախտագէտ վկայութիւնը իրենց վայելած «մեծ բարեշնորհումներուն» մասին, որոնց շնորհիւ ժամ մ'իսկ նեղութիւն կրելու մատնուած չեն։ Ասիկա իրապէս բարեշնորհում մըն է, սակայն խիստ նախնական եւ ամենէն ցած առանձնաշնորհումը որ չկրնար շնորհքի բարձրագոյն պարգեւներուն կարգին դասուիլ։ Գերազրական առանձնաշնորհումն է՝ «Քրիստոսի համար չարչարուելու» ենթարկուիլ։ Աստուծոյ շնորհաբեր առանձնաշնորհեալները անոնք են որ Տէր Յիսուսի նշանները կը կրեն եւ Քրիստոսի չարչարանքներուն պակասը կը լրացնեն։ Այնպէս որ երբ ձկնորս տեսանողը իր զարմացած աչքերը երկնից երանութիւնը վայելող սուրբերուն խումբին վրայ յառելով՝ լուսափայլ, կարկառուն դէմքեր կը տեսնէ ճերմակ, փայլուն զգեստներ հագած, ձեռքերնին յաղթութեան արմաւենիներ, եւ փառաբանութեան երգեր իրենց շրթունքներուն վրայ՝ ու ապշած կը հարցնէ անոնց ո՞վ ըլլալը եւ ուսկից այն մեծափառութեան հասնիլը, իրեն կը պատասխանուի թէ անոնք «մեծ նեղութենէ» եկած են։ Տէրոջը գունդերուն բազմաչարչար պատերազմիկներն են եւ ուրեմն հիմա Աստուծոյ գահին առջեւ կը գտնուին։ Արիւնոտ ճաժեան վսեմ բարձրութեանց՝ եւ խաչելութիւնը երկնային գահին առաջնորդած էին։ Ուստի մեր դատողութեան կերպն ու չափանիշը

սրբազրելու ենք եւ բոլոր Քրիստոսի համար չարչարուողները Տէրոջը թիկնապահներն ու Անոր ամենէն մօտիկներն սեպելով՝ մեր յարգանքները բերելու ենք անոնց։

«Տրուեցաւ... չարչարուիլ»։ Ասիկա տեսակ մը արքունական երաշխաւորութիւն եւ Աստուծոյ ընտրութիւն է սրբազան պաշտօնի մը։ Մեզի ծանօթ են անհատներ, որոնց թագաւորական առանձնաշնորհումներ տրուեցան քարոզելու, աւետարանելու եւ հեռաւոր ժողովուրդներու խաւարը լուսաւորելու։ Սակայն այս խօսքով մեր առջեւ կը դրուի բարձրագոյն շնորհք մը, «չարչարուելու» առանձնաշնորհումը։ Աստուծոյ ընտրութեան այս գիտակցութիւնն է որ շատ մը չարչարեալներու բերանը երգով կը լեցնէ կէս գիշերին։ Կէս գիշերին՝ մինչ Պօղոս եւ Շիղա իրենց ընդունած խարազանի հարուածներուն տակ կը կսկծային, անոնց շրթունքները բարձրաձայն զԱստուծոյ կը փառաբանէին, այնպէս որ բանտարկեալները լսեցին։ Dr. Griffith John, մեր մեծ միսիոնարը, կը պատմէ թէ երբ օր մը 2 ինաստանի թշնամի խումբէ մը շրջապատուած ծանր հարուածներ կ'ստանար ու ձեռքը երեսին տանելով զայն արիւնլուայ գտաւ, արտասովոր ուրախութիւն մը զգաց որ Տէրոջը անուան համար չարչարուելու արժանացած էր։ Davit Hill նոյնպէս կը վկայէ թէ ինչպէս Քրիստոսի համար ընդունած հարուածէ մը վերջը անբացատրելի յափշտակութիւն մը զգաց։ Արդարեւ այս կարգի վկայութիւններ բազմաթիւ են։ Ծառայութեան ամէն մեծ դաշտի ամէն մէկ անկիւն կը հանդիպինք չարչարեալ այրորու եւ կիներու, որոնք իրենց սպիները մեծալիոններու նման կը կրեն իրենց վրայ սրպէս թէ անոնցմով երկնային տիտղոսի մը կամ աստիճանի մը արժանացած եւ իրենց խաչեալ ու յարուցեալ Տէրոջը ընկերակցութիւնը վայելելու ապահովութեան հասած ըլլային։

«Նոյն պատերազմը ունենալով՝ զոր իմ վրաս տեսաք ու հիմա իմ վրայովս կը լսէք»։ Պօղոս եւ անոր Փիլիպպեցի եղբայրները իրարու չարչարանակից էին։ Միասին կը մարտնչէին աշխարհի կատաղի թշնամեաց ընդդէմ։ Միեւնոյն նեղութիւններէն անցնելով մարդոց համակրութիւնը իրարու հանդէպ աւելի կը խորանայ։ Ուստի կոռուող զինուորակիցներու յարաբերութիւնը վսեմ հանգամանք մը կ'ստանայ։ Եկեղեցի մը որ երբեք բռն ու արիւնահեղ պատերազմ չը

մղեր Սատանային հանգէպ, բնաւ չկրնար ըմբռնել «սուրբերու հաղորդակցութեան» զազանիքը: Չարչարուող սուրբերն են որ ամենէն լաւ կը հասկնան Տէրոջը զազանիքը եւ կենդանի միութիւն մը կը կազմեն Սուրբ Հոգւոյն հաղորդակցութեամբ: Իրարու չարչարանակից ըլլալով նաեւ մխիթարակից կ'ըլլան ու մեծ ցնծութեամբ սիրտ սրտի կը կապուի միեւնոյն հիման վրայ: Պօղոս առաքեալին կեանքին ու վարդապետութեանը մէջ թաքուն գանձեր կան որոնք երբեք պիտի չբացուին մեր առջեւ ու որոնց մէջ երբեք բաժին պիտի չունենանք մինչեւ որ «նոյն պատերազմը» ունենանք զոր անոր վրայ կը տեսնենք, ու բաժին ունենանք այն չարչարանքներուն մէջ՝ զոր ան կը կրէր Տէրոջը համար: Այս ծածուկ հաղորդակցութիւնները խիստ շահաբեր են ու արդիւնքն են միմիայն բարոյական ու հոգեւոր մեծ խաչակրութեանց տաքնապնդումն: Կ'արժէ աղօթել որ «Իր անուանը համար չարչարուելով» արժանի սեպուինք այս թաքուն գանձարանները մտնելու: «Անոնց պիտի տամ խաւարին գանձերը»:

Երբոր կեանքը զբօսանք միայն ըլլայ, անոր հաճոյքները ծանծաղ ու մակերեսային կ'ըլլան եւ զանոնք վայելողը երբեք չկրնար շփման զաւաւելի խոր ուրախութեանց հետ: Marie Antoinette իր հարսանիքին օրը, երբ Notre Dame պիտի երթար պսակուելու, հրամայեց որ բոլոր խեղանդամներն ու մուրացիկները եւ այն ամէնը որ տխրութեան ու թշուառութեան դրոշմը կը կրէին, ճամբուն վրայէն հեռացուէին, որպէսզի իր հարսանիքին ուրախութիւնը ջինջ ու անխառն երջանկութիւն մ'ըլլար: Ասիկա կարճատեւ ու ժանտ հնարք մըն էր: Marie Antoinette անդիտակցաբար կը դրժէր տիեզերքի յարգելի օրէնքներէն մին եւ ասով ամենէն ապահով միջոցը կը գործածէր իր երջանկութիւնը նսեմացնելու եւ նուազեցնելու: Երջանկութիւնը ձեռք չբերուիր չարչարանքէ հեռու կենալով այլ չարչարեալներու նեղութեանց մասնակցելով: Համբարձման լեռը կը հասնինք Գողգոթայի մութ բարձրութիւնը մազլցելով: Եթէ Marie Antoinette իր հարսանիքին օրը խեղանդամներուն մասնաւոր խնամք տանելով անոնց ծառայութիւն մը մատուցած ըլլար եւ ջանացած ըլլար անոնց լուծը ու բեռը թեթեւցնելու, մեծ զարմանքով պիտի զգար թէ ինչպէս Տէրը ջերմ հրճուանքով ու պայծառ ուրախութեամբ պիտի լեցնէր իր սիրտը ու հարսնիքի զանգակները աւելի զուարթօրէն պիտի հնչէին իր ականջներուն: «Եթէ մէ-

կը կ'ուզէ Իմ աշակերտս ըլլալ, թող իր անձը ուրանայ եւ իր խաչը վերցնէ ու Իմ ետեւէս գայ»: «Այս բաները ձեզի խօսեցայ, որպէսզի Իմ ուրախութիւնս ձեր մէջ մնայ ու ձեր ուրախութիւնը լման ըլլայ»:

ԱՍԻԱՅԻ ԵՌՔԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

000

7.— ԼԱԻՈՂԻԿԻՍ Յայտ. Գ. 14-22

(Գաղչ եկեղեցին 1913էն մինչեւ Յափշտակութիւն)

Լաւոդիկիոս, երեւելի քաղաքն է Փոնդիոյ (ներկայիս աւերակ) որուն աւերակոյտին վրայ կը կենայ Էսքի-Հիսար թրքական գիւղը:

Այս քաղաքը իր անունը առած էր զինքը շէնցնող եւ ընդարձակող Անտիօքոս Բ. ի Լաւոդիկիոյ անունէն, որ թարգմանուելով կրնայ ըսուել Ժողովուրդին տիրապետութիւնը — Լաօս եւ Տիկի յունարէն բառերէն կազմուած, զոր կը յատկանշէ այս շրջանի նկարագիրը Բ. Տիմ. Գ. 3:

Լաւոդիկիոս կը ցուցնէ ներկայ եկեղեցական շրջանը, եթէ բացառութիւն սեպենք Տէր Յիսուս Քրիստոսի գալստեան սպասող Փիղադեղփիոյ մնացորդը:

Տէրը կը յայտնուի այս եկեղեցիին երեք տեսակ տիտղոսներով, «Ամէնը, Հաւատարիմ եւ ճշմարիտ Վկան, Աստուծոյ արարածներուն Սկիզբը» հ. 14. Իրապէս շատ յատկանշական յանուններ:

Ամէնը «Քու կամքդ ըլլայ» եւ «Ճշմարիտ» ըսել է: Առաջին անգամ գործածուած է Թուոց Ե. 22ի մէջ եւ Ս. Գրոց մէջ 132 անգամ գործածուած նոյն իմաստով: Գ. Թագ. Ա. 36, Ա. Մնաց. ԺԶ. 36, Նէեմ. Ե. 13, Երեմ. ԻԸ. 6, Մատթ. Զ. 13, Յայտ. Ա. 6, 8, ԻԲ. 20: Նոյնպէս «Ամէն»ով կը վերջանան ԽԱ. ՀԲ. ԶԹ. ԺԶ. Սաղմոսները: Ինքն է «Ամէն»ը եւ Իր կամքը պիտի կատարէ բացարձակ իշխանութեամբ Իր փառաւոր գալստեան ատենը:

«Հաւատարիմ եւ ճշմարիտ Վկան»: Տէր Յիսուս Ինքն է ճշմարտութիւնը եւ Իր խոստումները անսուտ են ու կատարելապէս վստահելի: Մարդկային գիտութիւնը կը փոխուի, գաղափարներ եւ սկզբունքներ կը հիշնան, սակայն Յիսուս Քրիստոս նոյնն է երէկ, այսօր ու լաւիտեան: Մանաւանդ Իր երկրորդ գալստեան վերաբերմամբ հաւատարիմ է Իր վկայութիւնը, թէեւ

վերջին օրերու ծաղր ընողներ թեթեւօրէն պիտի ծաղրեն Իր խոստումը, սակայն ինք հաւատարիմ է ու հաւատարիմ պիտի մնայ Բ. Պետ. Գ. 3-4: Իրեն յուսացողներն ալ պիտի ցնծան Իր փառքին յայտնուելովը Ա. Կոր. Ա. 7-9: Ա. Թեա. Ե. 23, 24: Բ. Թեա. Գ. 3-5: Ա. Թեա. Ա. 3: Եբր. Ժ. 23: Յայտ. Ա. 5-8: Տէրը գիտէ այս շրջանին որքա՛ն պիտի ծաղրուէր Իր երկրորդ գալստեան յոյսը եւ լոյսը, ուստի Իր հաւատարմութիւնը կը շեշտէ եւ սպասողներն ալ հաւատարիմ կը կոչէ Մատթ. ԻԴ. 45, 46, ԻԵ. 21, 23, Ղուկ. ԺԲ. 42, 43, Յայտ. Բ. 10:

«Աստուծոյ արարածներուն սկիզբը»: Այո, Տէր Յիսուս է սկիզբն ամէն արարածոց Յովհ. Ա. 1-3, Ամէն բան Անով, Անոր համար եղաւ եւ առանց Անոր բան մը չեղաւ: Ան սկսաւ եւ Ան պիտի վեր- շացնէ Յայտ. Ե. 13, Եփես. Ա. 10, 11, Հոով. Ը. 19: Վերջին շրջանի ունայն խորհուրդներուն յայտ- նի յանդիմանութիւն մըն է այս, որոնք Տէր Յի- սուս Բրիստոսը ստեղծուածներէն մէկուն պէս ընդունելով, կ'ուրանան Անոր Աստուածութիւնը, ծաղրելի դարձնելով իրենց հաւատքն ու դաւա- նանքը Ա. Յովհ. Ե. 10, Դ. 13, Ա. 1-3, Ե. 20:

«Գիտեմ քու զործերդ, որ ոչ պաղ ես եւ ոչ տաք, երանի՜ թէ պաղ ըլլայիր կամ տաք, ուս- տի դուն որ գաղջ ես ու ոչ տաք, ոչ ալ պաղ, քեզ բերնէս դուրս փսխելու վրայ եմ» հ. 15, 16:

Տակաւին շնորհաց շրջանին մէջ ենք, Տէր Յի- սուս Իրենները կը սիրէ (մինչև վերջն ալ պիտի սիրէ) մինչև հասնի այս շնորհաց շրջանին վախ- ճանը Յովհ. ԺԴ. 1: Սակայն երբ դալ այն ահա- լոր օրը, ու յափշտակուին հաւատարիմները, դուրս պիտի փսխուին այն բոլորը, որոնք իրենց գաղջ կեանքով նողկանք կը պատճառեն իրենց Տէրոջը: Սառի պէս պաղ աշխարհի ու եռանդով լցուն Փիղաղեղփիացիներու մէջտեղ կան հա- ւատացեալներ որոնք քրիստոնեայ անունը ու- նին, սակայն աշխարհի խառնուած, գաղջացած, Տէրոջը սրտին ցաւ են եւ նողկանք իրենց զըզ- ուելի կեանքով: Ահա ասոնց է որ Տէրը ապաշ- խարութեան հրաւէր կ'ուղղէ հ. 19:

Ամբարտաւան է Լաւողիկիս, քանզի կ'ըսէ, «Հարուստ եմ ու մեծցայ, բանի մը կարօտ չեմ» հ. 17: Այո, ներկայ եկեղեցին ամէն ատենէ աւե- լի գիտութիւն ունի, իմաստուն ուսուցիչներ, գի- տուն աստուածաբաններ, ամէն տեսակ թերթեր եւ գիրքեր, Ս. Գրոց ղէպքերը պատկերացնող շարժապատկերներ եւ ներկայացումներ: Հիմա ա- մենայեալին աշակերտը Ս. Գրոց ուսուցիչ դար- ձած է եւ պատրաստ ամէն նիւթի շուրջ վիճա-

բանելու, բարձր վկայութիւններ, ոչ քլամի ձե- ւով, նոյնիսկ թերթերու մէջ շրթունքի գեղեցիկ աղօթքներ, չափուած ձեւուած քարոզներ, բարե- գործական եւ կրօնական հաստատութիւններ իր հարստութիւնը եւ պարծանքն են, իսկ Տէրը կ'ը- սէ, «Չես գիտեր որ դուն խեղճ ու թշուառական ես եւ աղքատ ու կոյր ու մերկ» հ. 17:

Փրկութիւն կը վկայես՝ կիրքերու գերի ես, սրբութիւն կը գաւանիս՝ մարմնի եւ հոգիի պղղ- ծութիւններէ վարակուած ես, արդարութիւն կը քարոզես՝ սակայն անիրաւութիւն կ'ընես, եղբոր- մէդ սէրդ զլանալով Երեմ. Ե. 4: Բաժանումներէ եւ աղանդամոլութենէ տարուած եղբայրդ կը դատես ու կ'ատես ու կ'ուրացեր ես Բ. Պետ. Ա. 9, Ա. Յովհ. Բ. 9-11: Պարկեշտութեան ու սրբու- թեան պակասը աշխարհի առջեւ քեզ մերկացու- ցած ըլլալով աշխարհ քու մերկութիւնդ կը տես- նէ ու քեզ կը նախատէ, կ'անպատուէ: Եղբայր եղբոր հետ դատի կը մտնէ անհաւատներուն առ- ջեւ, հովիւներ գիրար կը նախատեն եւ քարո- ղիչներ գիրար սուտ հանելու կը ջանան, Ս. Գը- րոց ճշմարտութիւնները կը նախատուին եւ սըր- բութիւններ խոզերու առջեւ կը նետուին: Աշ- խարհ եկեղեցիին այս կեանքէն կը զայլթակդի ու Լաւողիկեան կը պարծենայ ու կ'ըսէ «Հարուստ եմ... ու մեծցայ...»:

Տէրոջը խորհուրդն է իրեն, «Ինծմէ կրակի մէջ փորձուած ոսկի ծախու առ որպէսզի հարստա- նաս, ու ճերմակ ճանդերձներ որպէսզի հագնիս, որպէսզի քու ամօթալի մերկութիւնդ չերեւնայ, եւ աչքերդ դեղ գիր որպէսզի տեսնես»:

Աստուծոյ խօսքէն աւելի մարդոց վկայութեան եւ խօսքին կարեւորութիւն տուող այս եկեղե- ցիին Տէրոջը խրատն է որ իրմէ աւել, եւ կը- րակի մէջ փորձուած ոսկի առնէ: Աստուծոյ խօս- քը որ ամէն տեսակ նեղութիւններու եւ հալա- ծանքներու մէջէն անցնելով մեզի հասած է, կը- րակի մէջ փորձուած ու զտուած ոսկիէն աւելի թանկագին ու պատուաւորն է Սաղ. ԺԺ. 10, Ա. Պետ. Ա. 5-7: Նախնի սուրբեր մինչեւ իմահ հա- ւատարիմ մնալով մեզի աւանդեցին զայն, ոչ թէ քննադատելու, ոչ թէ հին պատմութեան մը պէս զայն ընդունելու, հապա ապրելու ու պահելու համար: Մախու առ, ժամանակդ եւ ուժդ տալով, սերտելով, սորվածներդ գործնականի եւ հաւատ- քի վերածելով եւ անոր պահանջած զոհողութիւ- նը յանձն առնելով, որպէսզի Հոգւոյն առաքի- նութիւններով, պտուղներով եւ պարգեւներով հարստանաս Կող. Բ. 1-3 եւ սրբութեան զարդա- բանքով փայլիս:

«Ճերմակ հանդերձներ որպէսզի հազնիս»: Իմ արդարութիւնս, Իմ կեանքս, ոչ թէ քու արդարութիւնդ, ոչ թէ բարոյական կեանք, մարդոց սորվեցուցածին պէս որ զգուշի է Իմ աչքերուս, հապա Հոգւոյն Սրբոյ ձեռքով, Յիսուս Քրիստոսը հազնելով, որ է մեր արդարութիւնը Կող. Գ. 12-14:

«Աչք՝ ըզ գեղ ղիր, որպէսզի տեսնես»: Կուրցած է այս եկեղեցին, կարօտ է լոյսի, Տէրոջը պատուիրանին, Սաղ. ԺԺ. 8: Սիրոյ պատուիրանին մէջ պակասած ու կուրցած է Ա. Յովհ. Բ. 11: Առաքելութեանց մէջ պակասած է Բ. Պետ. Ա. 5-9: Հաւատարմութիւն մէջ պակասած ըլլալով կուրցած է Հով. ԺԱ. 7,8, Ժ. 31,32: Միայն Քրիստոս Ինք կը բժշկէ եւ կոյրերու տեսութիւն կուտայ Բ. Կոր. Գ. 14,15, եւ Տէրը կը հրաւիրէ եկեղեցին որ իր վերաւոր ձեռքերը դիտէ ու արիւնոտ շաւիղին նայելով բժշկուի, սիրելով՝ ինչպէս Ինք սիրեց, ապրելով՝ ինչպէս Ինք մեզի օրինակ թողուց եւ հաւատարմով՝ ինչպէս որ Ինք մեզի պատուիրեց Ա. Յովհ. Գ. 16, Յովհ. ԺԳ. 17, ԺԴ. 1:

Տակաւին շնորհքի շրջանը վերջացած չէ, Տէրը տակաւին կը սիրէ այս եկեղեցին, կը յանդիմանէ ու կը խրատէ, ինչպէս ըրաւ Իսրայէլի իր ամենամանկեալ շրջանին, զայն նախանձաւոր ըլլալու կը հրաւիրէ, ցուցնելով անոր սկար կողմերը եւ այն ամօթալի մերկութիւնը որով աշխարհի առջեւ նախատինք կ'ըլլայ եւ զայն ապաշխարութեան կը հրաւիրէ Յոր. Ե. 17, Առակ. Գ. 11,12, Եբր. ԺԲ. 5-7:

Եկեղեցին իր կեանքէն դուրս ձգած է խաչեալ Քրիստոսը, ուստի Տէրը դուռը կայնած կը զարնէ Երզ. Ե. 2: Լաւողիկիոյ շրջանը անհատական արթնութեան շրջանն է, ուր Տէրը առանձին առանձին այցելելով հոգիները կ'արթնցնէ իր գալստեան յոյսին համար Ղուկ. ԺԲ. 37: Անոնք որ կը բանան իրենց սիրտը, անոնց հետ ընթրիք կ'ընէ իր օրհնեալ ներկայութեամբ լեցնելով եւ նորանոր օրհնութիւններով ուրախացնելով զանոնք: Յիսուսի կարօտ հոգին կը կըշտանայ իր գալստեան յուսովը լեցուն հաւատացեալին սիրով եւ հաւատքով մատուցուած աղօթքներէն եւ այն պտուղներէն՝ որոնցմով լեցուն է այս օրհնեալ կեանքը ապրող իր սիրելին:

Տէրը կը խոստանայ յաղթողին՝ նստիլ տալ իր աթոռը, ինչպէս Ինք յարութեան փառաւոր յաղթանակովը նստաւ Հօրը աթոռը, հմր. 21, Մատթ. ԺԺ. 27,28, Ղուկ. ԻԲ. 28-30, Բ. Տիմ. Բ. 12: Յաղթիլ ժամանակի մոլորութեանց՝ դիմաշաւով ծաղրի եւ նախատինքի՝ հաւատարիմ մը-



ՏԵՐՈՋ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Աղէկ եղաւ ինծի որ վշտացայ, որպէսզի Քու կանոններդ սորվիմ: Սաղ. ԶԺԺ. 71

Ծնած եմ 1913 թուականին Խարբերդի Հապուսի դիւղին մէջ: Բողոքական ընտանիքի զաւակ եմ: Բնական մահը կանուխ խլեց մայրս, իսկ հայրս աքսորի աթիւ զնաց ու ալ չվերադարձաւ: Մնացինք որբուհիներ Աստուծոյ հայրական նախախնամող ձեռքին մէջ: Նա հողաց մեզ բարեխնամ մարդոց ձեռքերով եւ տուաւ մեզի պատեհութիւն ապրելու, ուսանելու եւ զառաւարակուելու տարիներու ընթացքին մէջ: Ասոնց համար փառք, բիր փառք մեր Տէրոջ յաւիտեան: Դարձեալ Տէրը իր նախախնամութեամբ տարապրութենէն ալ դիւս պահած է, յետոյ ինծի պէս անարժանին ալ իր փրկարար կամքը յայտնելու համար: Արդէն մանկութեանս ատեն երբ դեռ նոր կարգալ կը սորվէի, Աւետարանն էր որ զիս ամենէն շատ կը հետաքրքրէր: Անոր պարզ եւ

նալ հաւատքի մէջ, պատերազմիլ բարի պա՞տերազմը, դուրս հանելով բոլոր կործանիչ մոլորութիւնները: Մնալ հաւատարիմ Տէր Յիսուս Քրիստոսի խաչին եւ սիրոյն Յուդա 20,21: 24ը նաուել ժամանակի անօրէնութիւններէն սիրոյ զրօշակը բարձր պահելով Մատթ. ԻԴ. 9-13: Յաղթողութեան երգերով սպասել Տէր Յիսուսի երկինքէն յայտնուելուն: Ահա յաղթութիւնը, եւ այսպէս յաղթողներուն է օրհնեալ խոստումը «Ինծի հետ Իմ աթոռս նստել պիտի տամ»:

Լաւողիկիայի շրջանին մէջ կ'ապրինք, Տէրը պահէ մեզ իր շնորհքովը, մանաւանդ պարծենալէ եւ ամբարտաւանութենէ եւ Ինք շնորհէ որ երջանիկ յուսով յաղթական կրնանք զինք դիմաւորել օգին մէջ: Ան կ'ըսէ, «Այո, շուտով կուգամ Ես»: «Ամէն, եկուր, Տէր Յիսուս»: Յայտ. ԻԲ. 20:

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր ամենուն հետ ըլլայ: Ամէն:

Վեր. Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ

Փօնտ Օպէնաս

ճշմարիտ պատմութիւնները, Յիսուսի ըրած բոլոր հրաշքները կարդալով, իմ մանկական սիրտս Յիսուսի հանդէպ սիրով մը կը լեցուէր, բայց զեռ վերստին ծնած չէի: 1922ին Խարբերդէն մեզ փոխադրեցին Սուրիա, հոն 1923ին Տէրը զիս այցելեց եւ անկէ ետքը քանի մը տարիներու ընթացքին Յիսուսի սէրը վայելեցի շատ զգալի կերպով:

Բայց յետոյ, երբ տարիքս առի, առաջուան սէրս հետզհետէ թուլցաւ: Տէրը կարծես թոյլ տուաւ զիս ինալու, որպէսզի կարենայի ետքը բոլորովին համոզուած Իրենը ըլլալ: Եւ այս հետեւեալ կերպով պատահեցաւ: 1928ին երբ դըպրոցէն դուրս ելայ, կը տեսնէի որ աշխարհ գեղեցիկ էր իր հրապոյրներով: 1930ին Ֆրանսա եկայ: Հոս Սատանան ամէն միջոց կը գործածէր որպէսզի սիրտս զբաւէր: Ան մեծ մասով յաջողեցաւ, սակայն Յիսուս իմ սրտիս մէջ գոնէ անկիւն մը զեռ ունէր: Զէի կրնար զԱյն բոլորովին դուրս ընել, որովհետեւ զիտէի թէ Անիկա սիրելի էակ մըն էր, եւ շարունակեցի այսպէս ժամանակ մը: Երբեմն սիրտս հանդարտեցնելու համար ժողովներու կը յաճախէի, սակայն աշխարհային էի: Կ'ուզէի ապաշխարել, սակայն չէի կրնար: Աստուածային օգնութեան պէտք ունէի: Աստուծոյ զաւակներուն ուրախութիւնը տեսնելով կը փափաքէի անոնց կեանքն ունենալ, սակայն ի դժուար: Յաճախ ձայն մը կուզար սրտէս որ կ'ըսէր, գուն ժառանգն ես Քրիստոսի եւ կը մտածէի ատոր վրայ: Կը յիշեմ որ մը երբ դաշտի պտոյտ մը կ'ընէինք, ինքզինքիս եկայ եւ ըսի միւս ընկերներու, «Ա՛խ, գիտէ՞ք ինչ լաւ կ'ընեն ուրիշները, ժողովի կ'երթան, կ'աղօթեն, իսկ մենք ի՞նչ կ'ընենք, հոս»: Այդ ատեն ընկերներէս մին հեգնելով ըսաւ, «գուն ալ գնա»: Ես ալ թողուցի զիրենք եւ հեռացայ առանձնութեան մէջ եւ սկսայ լալ այս ցաւալի վիճակին համար:

Այս բաները տեղի կ'ունենային երբ Փօնտ Օպէնաս կը գտնուէի: Հոն գործարանի խոնավութենէն ոտքի ցաւ մը ունեցայ եւ ստիպուեցայ հիւանդանոց երթալ: Ինկալ կաթոլիկ միջավայրի մը մէջ, ուր սիրտս խիստ վշտացած էր, ըսկըսայ նեղուիլ, արտասուել, երեւակայել դժբաղդութիւնս, յիշել անցեալ որբութեան կեանքս եւ հիմա ալ այս հիւանդանոցին մէջ: Այդ ատեն պէտք ունէի ճշմարիտ կարեկցի մը, մեծ Բժիշկին, Յիսուս Քրիստոսի: Քանի որ շատ ժամանակ ունէի կարդալու, սկսայ կարդալ Եսայեայ մարգարէութենէն: Անոր մէջ ներկայացաւ ինծի Աստուծոյ անչափելի սէրը, նոյնպէս նաեւ Անոր

անաչառ բարկութիւնը: Սիրտս այս բաները կը կնքէր եւ վերջապէս համոզման մը կը հասնէի: Կարգացի մինչեւ Եսայ. ԾԴ. զլուխը: 4-8 համարները ինծի ուղղուած կոչ մը նկատելով ընդունեցի Խորայէլի Սուրբը իբր անձնական Փըրկիչս, որ թէեւ վայրկեան մը զիս թողած էր, սակայն կը խոստանար մեծ ողորմութիւնով զիս ժողովել: Այս համարները զիս վերստին ծնան: Յանկարծ ուրախութիւն ծագեցաւ սրտիս մէջ, հոգեւոր այլակերպութիւն մ'ունեցայ, մէկ վայրկեանի մէջ խորհուրդներս ու զգացումներս փոխուեցան: Տէրը ինծի նոր սիրտ մը տուած էր, ուրախութեամբ եւ խաղաղութեամբ լեցուն, որու ի հետեւան հիւանդանոցը ինծի երկինքի վայր մը դարձաւ, մահիճս թեթեւ բեռ մը: Տէրը մէջ ողորմութիւն գտայ: Քանի որ վշտացած չէի, կը սխալէի Սաղ. ՃԺԹ. 67: Այսպէս բարեբար Հովիւս հոգիս ազատեց Սատանայի գերութենէն: Այսպէս Անոր յանձնուեցայ բոլորովին: Հիւանդանոցին մէջ մնացի զրեթէ երկու տարի, ուր տեղւոյն հովիւը Վեր. Ա. Փափաղեան բոլոր ջանքերը թափեց խնամելու թէ հոգիս եւ թէ մարմինս: Ստացայ շատ օրհնութիւններ եւ վայելեցի շատ մտերմութիւն զիս շատ շատ սիրող Փրկչէս, որուն մէջ նաեւ խնդրեցի Անկէ առողջութիւն: Իրեն համար ապրելու եւ պատմելու այն գործերը եւ հրաշքները զոր կատարեց իմ վրաս: Անիկա լսեց իմ եւ իր զաւակներուն աղօթքները, որոնք մատուցուեցան ինծի համար: Երկու տարուան ընթացքին Տէրը զիս բժշկեց հոգեւոր եւ մարմնով եւ հիմա Քրիստոսի սիրովն ու ողորմութիւնովը կ'ապրիմ եւ ամէն օր կ'օրհնեմ զԱստուած Իր անպատմելի պարգեւին համար որ օր ըստ օրէ աւելի թանկարժէք կը դառնայ ինծի: Հիմա հաւատոյ կեանքը ոչ թէ բեռ մըն է, հապա գործութեան աղբիւր մը, որուն հոսանքը զիս կը կրէ բոլոր զժուարձութիւններուն մէջէն դէպի յաւիտենական նաւահանգիստը, դէպի իմ երկնաւոր Հօրս գոգը:

Քրիստոսով ձեր քոյրը

ՎԱՐԴԱՆՈՅԵ ԱՊԱՃԵԱՆ

Վալանս





Ս. ԳՐԱԿԱՆ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻԻՆ

Քաղեց՝ SCOFFIELD էն

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

‘ԻՄ ՏԵՐՍ ԵՒ ԻՄ ԱՍՏՈՒԱԾՍՍ,

(ՅՈՎՀ. Ի. 28)

oo — oo

Աստուածաշունչին մէջ Աստուածութիւն յայտնող երեք անուններ կան. — Էլօիմ, Եփովա եւ Ա. տօնայի:

Էլ անունով կազմուած երեք բարդ անուններ կան. — Էլ Էլիօն, Էլ Օլիմ, Էլ Շատուայի:

Նոյնպէս Եհովա անունով երեք մասնակի բարդացումներ կան. — Եփովա-Էլօիմ, Ատոնայի Եփովա եւ Եփովա-Սաբաուով:

.....

1. Մաքրել ապաշխարող մեղաւորը իր բոլոր մեղքերէն եւ պղծութիւններէն (Եզեկ. ԼԶ. 23): Նաեւ ջնջել մեղքին բնական վարձքը եղող (Հո. 2. 23) յաւիտեանական դատապարտութեան կը նիքը (Հո. Ը. 1):

2. Կենդանացնել հոգեւորապէս մեռեալ մեղաւորները (Յովհ. Ի. 37, 38, Ե. 21, 25-26) եւ կենդանացած հոգիները յագեցնել Աստուածային լիցունութեամբ Յովհ. Դ. 13, 14:

3. Ուղղել եւ արգասաբերել մեղքով խոպանացած անպտուղ կեանքերը (Յովհ. ԺԵ. 5-8): Երբ մեր սիրտը, միտքը եւ հոգին կը ոռոգուի կենաց Աղբիւրին ջրովը, այն ատեն զբախտային պտղաբերութիւն մը եւ եզեմական գեղեցկութիւն մը կ'ստանայ մեր կեանքը: Այն ատեն հոգեւորապէս կ'իրականանայ Եսայ. ԼԵ. Ի փառաւոր մարգարէութիւնը, «Անապատը ու չոր երկիրը պիտի ուրախանայ... ու շուշանի պէս պիտի ծաղկի... անոր պիտի տրուի Լիրանանի փառքը, Կարմեղոսի ու Սաբօնի վայելչութիւնը...»: Կենաց Զուրով ոռոգուած կեանքերը պիտի նմանին Սաղ. ԿԵ. 9-13 համարներուն ըզմայլելի նկարագրութեանը:

Արդ, լսեցէք Աստուածային հրաւերը ո՛վ բոլոր ծարուածներ, «Հոգին ու հարսը կ'ըսեն, Ե. կուր, եւ ան որ կը լսէ՝ թող ըսէ, Եկուր, ու ան որ ծարաւ է՝ թող գայ եւ ան որ կ'ուզէ՝ կենաց ջուրը ձրի առնէ» Յայտ. ԻԲ. 17:

Այս երեք անգամ երեք խմբաւորումները անհրաժեշտօրէն Աստուածութեան Երրորդութիւնը կը շեշտեն:

Եհովա անունով եւ Էլ անունով բարդացումներու մասին սերտեցինք «Բանբեր»ի անցեալ երկու թիւերուն մէջ:

Այս անգամ սերտենք Ատոնայի անունը: Այս բառը կը նշանակէ Տէր, առնուած երկու իմաստով. ծառայի մը տէրը եւ կամ կնոջ մը ամուսինը: Այս անունը թէեւ մարդոց համար ալ գործածուած է, բայց թարգմանութեան մէջ Աստուծոյ համար գործածութիւնը գլխաւորով՝ իսկ մարդու համար մանր գրով տպուած ըլլալով կը զանազանուի:

Շատ բնական կերպով այս բառին սերտողութիւնը մեզ կ'առաջնորդէ Յիսուսի, վասնզի Նոր Կտակարանին մէջ Եբրայեցերէն Ատոնայի բառին համապատասխանող Քրիստոս-Տէր անունը 663 անգամ տրուած է Յիսուսի: Այս իմաստով Յիսուս զայս գործածեց Մատթ. ԻԲ. 43-45ի մէջ:

Թողմասի բերնին մէջ մեր վերնագրին բառերը զարմանալի կերպով կը յայտնեն նաեւ զայս, «Իմ Տէրս եւ իմ Աստուած» (Յովհ. Ի. 28) եւ արդէն տէրոջ ու ծառայի եւ թէ ամուսինի ու կնոջ յարաբերութիւնները գոյութիւն ունին հոգեւորապէս Քրիստոսի եւ հաւատացեալին միջեւ Յովհ. ԺԳ. 13, Բ. Կոր. ԺԱ. 2, 3:

Հոս միջանկեալ կերպով ըսենք թէ Հին Ուխտին Իսրայէլին Եհովայի կիներ նկատուիլը եւ Նոր Ուխտի եկեղեցւոյն Քրիստոսի կիներ նկատուիլը պէտք չէ իրարու հետ շփոթել: Նոր Կտակարանը կը խօսի եկեղեցւոյն վրայ իբր կոյս մը մէկ էրկան մը նշանուած (Բ. Կոր. ԺԱ. 2, 3), մինչդեռ Հին Կտակարանը կը խօսի Իսրայէլի վրայ իբր անհաւատարիմ պոռնկացած կին մը որ կըրկին իր էրկան կողմէ շնորհք եւ ներողութիւն գտնելով իբր Անոր օրինաւոր կիներ պիտի վերահաստատուի (Ովա. Բ.):

Ատոնայի-Տէր անուամբ երկու սկզբունքներ ի գօրոյ են տէրոջ եւ ծառայի յարաբերութեան մէջ:

ա. Տէրը իրաւունք ունի բացարձակ հնազանդութիւն պահանջելու Յովհ. ԺԳ. 13, Մատթ. ԻԳ. 10, Ղուկ. 2. 46):

բ. Ծառան իրաւունք ունի իր ծառայութեան մէջ Տէրոջը առաջնորդութիւնը խնդրելու (Ես. 2. 8-11): Աստուածային անուններուն պարագային համեմատ գործածութեան մէկ օրինակը կը տեսնենք Ելից Դ. 10-12ի մէջ: Քանի որ ծառայութիւնն է խնդրոյն առարկան եւ Մովսէս իր տը-

կարութիւնն ու անբաւականութիւնը կ'զգայ, նա այսպէս կը խօսի (Եբր. բնագիր) «Եւ Մովսէս ըսաւ Եհովայի, ո՛հ, իմ Աստուծայիս, ես ճարտարխօս չեմ... եւն»։ Բայց Մովսէս կարօտ էր ստեղծագործական զօրութեան (ծանրախօս ու ծանրալեզու ըլլալով) եւ պատասխանը Աստուծոյի անունով չէ, հապա »Եւ Եհովա ըսաւ անոր, ո՛վ տուաւ մարդուն բերան... ուստի գնա հիմա, եւ ես քու բերնիդ հետ արտի ըլլամ...»։ Նոյն այս որոշիչ գործածութիւնը կը տեսնենք Յես. Է. 8-11-ի մէջ։

Այս անուններուն իմաստալից գործածութեան մէկ օրինակն ալ կը տեսնենք Եբր. Տէր Աստուած (Եհովա Էլօհիմ) եւ կամ Տէր Եհովա (Աստուծայի Եհովա) կը գործածենք։ Մինչդեռ առաջինը Աստուծոյ մարդուն վրայ ստեղծագործական եւ կամ բարոյական եւ փրկարար հեղինակութեան հետ առնչարար կը գործածուի (Ծննդ. Բ. 7-15, 16, 17, 18-24, Գ. 16-19, 22-24, Գ. 8-15, 21), երկրորդը Աստուծոյ մարդուն վրայ տիրողական հեղինակութիւնը կը ցուցնէ (Ծննդ. ԺԵ. 2, 8, Բ. Օրին. Գ. 24, Թ. 26, Յես. Է. 7, Դատ. 2. 22, Ժ2. 28 եւն),

Որքա՛ն յիմարական քննադատութիւն է բարձրագոյն կոչուած քննադատութիւնը, եւ փրկականին մէջ որքա՛ն ստորնագոյն քննադատութիւն մըն է այն, որքա՛ն ծանծաղ դիտութիւն Աստուծոյ սուրբ խօսքին, երբ (հաւատքի մէջ) տղէտներ եւ անհաստատներ Ս. Գրքէն քանի մը (երեւութապէս) դժուարիմաց խօսքեր ծուռ կողմը կը դարձնեն իրենց անձին կորուստին համար։ Այսպէս է որ գտնուած են Աստուածաբանական կոչուած քրօֆէսորներ որոնք յայտարարած են Ծննդոց գրքին առաջին գլուխներուն մէջ տարբեր Աստուածներ գտած ըլլալ, վաճառի տարբեր անուններ կան նոյն օրհնեալ Աստուծոյն, որուն մեծութիւնը եւ իմաստութիւնը ու գիտութիւնը խորունկ է, դատաստանները անքննելի ու ճամբաները անգննելի։

Տէրոջը մեր Աստուծոյն օրհնեալ անունը վրայ այս համառօտ սերտողութիւնը վերջացնելէ առաջ մեզի կը մնայ վերջին բարդացեալ մէկ անունն ալ յիշել — Եհովա Սաբաուդիթ, Զօրութեանց Տէր (Ա. Թագ. Ա. 3), իբր «Զօրքերուն Տէրը, ինքն է փառաց թագաւորը» Սաղ. ԻԳ. 40։ Այս անունն նշանակութիւններն ու գործածութիւնները կարելի է այսպէս ամփոփել. —

ա. «Զօրքերը» երկնային են. առաջին իմաստով հրեշտակներուն կ'ակնարկուի, բայց Եհովա Սաբաուդիթ անունը իր մէջ կը միացնէ բոլոր Աստուածային եւ երկնային զօրութիւնները զո-



ՎԵՐՋԻՆ ԻԼՁԸ

I

Եթէ երբեք պատահի որ ուշանայ
Վերադարձը Յիսուսին,
Ինչպէս երբեմն հիւանդի մը մերձամահ
Սպասումները յոյսին...:

Ու երկինքէն փախչի աստղըս լուսադէս,
Գիշերին մէջ միզապաղ,
Ու ես ինձմ կարօտաբաղձ հարսի պէս՝
Արտասուաթոր ու նըւա՛ղ...

Սընարիս քով մի թողուք որ մօտենան
Սեւ լաջակով գութկաններ,
Ոչ իսկ մայր մը աղիոյրդ ու լալկան
Եւ ոչ մէկ քոյր տրամներէ:

Կ'ստե՛մ, կ'ստե՛մ, յուսակտուր ողբերգուն
Եւ հեծեմանքն իր սուգին,
Իր սեւերը, իր թախիծը ու թագուն
Վըհատումներն արցունքին:

որոնք կարելի է ստանալ Աստուծոյ ժողովուրդին կարօտ վիճակին մէջ (Ծննդ. ԼԲ. 1, 2, Եսայ. 2. 1-5, Գ. Թագ. ԻԲ. 19, Դուկ. Բ. 13-15):

Բ. Եհովա-Սաբաուդիթ անունը գործածութեան մէջ Աստուծոյ որոշիչ անունն է իսրայէլի օգնութեան եւ մխիթարութեան համար անոնց բաժանումի եւ ձախորդութեանց մէջ (Գ. Թագ. ԺԷ. 15, ԺԹ. 14, Եսայ. Ա. 9, Ը. 14-14, Թ. 13-19, Ժ. 24-27, ԼԱ. 4, 5, Անգ. Բ. 4, Մաղ. Գ. 16, 17, Յակ. Ե. 4):

«Տէր, Տէր Աստուած, ողորմած ու բարերար, երկայնամիտ եւ առատ ողորմութիւնով ու ճշմարտութիւնով, հազարներուն ողորմութիւն ընող, անօրէնութիւնը, յանցանքը ու մեղքը ներող, բայց յանցաւորը ամենեւին անպարտ չթողուր» Ելից ԼԳ. 6, 7:

«Երանելին ու միմիայն Հզօրը, Թագաւորն էրուն թագաւորը ու տէրերուն Տէրը, որ միայն ունի անմահութիւն՝ անմերձեանալի լոյսի մէջ բնակած, զոր մարդոցմէ մէկը չտեսաւ, ոչ ալ տեսնելու կարող է, որու պատիւ եւ զօրութիւն, յաւիտեանս: Ամէն» (Ա. Տիմ. 2. 15, 16):

II

Պարտեալները, պարտեալները թող սըգան
Աղիողորմ ճիչերով.

Հոգեաւորոր ողբասացները թող պան
Եւ մահերգեն օրերով:

Անոնք՝ որոնք կ'երթան առանց հաւատքի
Եւ թողութեան եւ յոյսի,

Կ'հոգեւարին իրաւագուրկ երկինքի,
Առանց արեան Յիսուսի:

Խեղճ, մահապարտ հոգիները թող սըգան
Անցեալը պիղծ եւ անյոյս,

Ու թող կոծեն մահայաջորդ ապագան,
Եւ կործանումը անյոյս:

Եւ թող բոլոր նոճիները անտառին,
Եւ ալիքները ծովուն,

Հոգեհառաչ մահերգանքի կանչունին
Դժոխատար կեանքերուն,

III

Բայց քանի որ Աստուած է զիս յօրինած
Իր պատկերով, Իր շունչով,

Վերածընւած Իր Հոգիէն ու լեցուած
Անմահութեան հաւատքով...

Եւ քանի որ կ'ապրիմ Անով ու Անկէ,
Անոր համար առ յաւէտ,

Ապա ինչո՞ւ երբ մահը գուռըս թակէ,
Կըթտիմ ես դառնաղէտ:

Դիւցազնի պէս կ'ուզեմ երթալ ընդառաջ
Մահուան հրակայ հըրչին.

Հեռու ինձմէ թէ տըրտմութիւն, թէ հառաչ,
Թէ բաժակը հաշիշին:

Պահը սուրբ է, կ'ուզեմ մընալ միշտ կանգուն
Դէմ յանդիման ճիշդ խաչին,

Կ'ուզեմ տոկալ ժըպիտերես աննըկուն
Մինչեւ վայրկեանը վերջին:

IV

Արդ, կ'աղաչեմ, թող հեռանան ողբակոծ
Դասալիքները բոլոր,

Ինչո՞ւ յուզեն շունչով մը դառն ալեկոծ,
Անդորրանքըս փառաւոր:

Ժամըս հասաւ... զուցէ մեկնիմ ես յանկարծ,
Բայց պաղատանք մ'ունիմ դեռ.

Ջահը՛ս՝ ջահըս պահեցէք միշտ իւղարծարծ,
Սընարիս ճիշդ առնութիւր:

Հաւատակից մը ձիւնազգեստ եւ ամբիծ,
Նըստի քովըս ծընրադիր,

Եւ Ս. Գիրքէն՝ դէմքով խաղաղ անթախիծ
Կարգայ էջեր յուսալիր:

Ու մինչ ջահըս հաւատքիս պէս կ'արծարծի,
Ծըռի՛նք, ծրռի՛նք աղօթքի,

Ապա երգենք... այսպէս հոգիս թող յածի
Աստուածակերտ նոր փառքի...

ՍԱՄՈՒԷԼ Պ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԵՃ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ

ՀԱՅՈՅ ՀԱՒԱՏՈՅ ԸՆՏԱՆԻՔԷՆ

○○○○○—○○○○○

Բ. ՔՐԻՍՏՈՆԷՌԻԹԻԻՆԸ ԻՐ ՍԿՋԸԱԿԱՆ
ՇՐՋԱՆԷՆ ՀԱՆԴԻՊԱԾ Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ
ԲՈՒՌՆ ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ.—

«Բանբեր»ի բոլոր ընթերցողներն ալ զիտեն
թէ ինչպիսի թշնամական դիրք բռնեցին հրեա-
ները, մանաւանդ անոնց ամենէն բարեպաշտ
տարրը, — փարիսեցիք — հանդէպ Քրիստոսի ու
Անոր աշակերտներուն: Դարձեալ՝ զէթ ոմանց
ծանօթ են նաեւ այն արիւնասեղ հալածանքնե-
րը, որոնք յարուցուեցան Աւետարանին դէմ յոյ-
ներու եւ հոովմայեցիներու կողմէ, եւ այն ալ ոչ
թէ միայն տգէտ, վարի խաւերուն, հապա յա-
ճախ բարձր դասուն կողմէ, նոյնիսկ Տրայանոսի
եւ Դիոկղետիոնոսի նման իմաստուն ու ազնիւ
կայսրեր իրենց պարտականութիւն նկատած են
հալածելու քրիստոնեաները: Եւ այս շատ բնա-
կան է: Հեթանոսութիւնն ու Մուհամետականու-
թիւնը, ինչպէս նաեւ Մովսիսականութիւնը՝ փա-
րիսեցիներու ըմբռնած իմաստովը՝ հիմնուած են
մարդուն բնական, աստեղական միտումներուն
վրայ, կը շոյեն անոր ինքնասիրութիւնը, ինք-
նահաւանութիւնը ու երկրաքարշ հակումները եւ
կ'ամրացնեն այն բոլոր կապերը որոնք մարդը
երկրին կը զօգեն. անոնք կը ձգտին զԱստուած
խսկ ծառայեցնել մարդուն բաղձանքներուն: Բայց

քրիստոնէութիւնը խաչի կրօնն է, կ'ուզէ խաչել մարդուն հպարտութիւնը, եսը եւ աստեանականութիւնը, ու անոր մէջ յարուցանել կեանք մը որ ամբողջովին նուիրուած է յաւիտենականութեան եւ Աստուծոյ: Ուստի բնական էր որ խաչին քարոզութիւնը հրեաները գայթակղութիւն՝ ու յոյները յիմարութիւն պիտի հռչակէին ու հալածէին անոր հետեւողները:

Տարբեր դիրք չընենցին նաեւ հեթանոս հայերը: Անոնք ալ խիստ հալածանքի ենթարկեցին քրիստոնեաները: Այսպէս՝ հալածանքներ կը յիշուին Ա. եւ Բ. դարերու մէջ Սանատրուկ ու Արտաշէս Բ. աւանդական թագաւորներուն եւ Գ. դարու մէջ Խոսրով I. եւ Մեծն Տրդատ կամ Տրդատ Բ. պատմական թագաւորներու տարիներուն:

Այս հալածանքներուն առաջին զոհերն են թաղէոս ու Բարթողիմէոս առաքեալները, ինչպէս վերը յիշեցինք: Մինչեւ Գրիգոր Լուսաւորիչ ասոնց նման մարտիրոսացած են Հայաստանի մէջ ուրիշ բազմաթիւ քրիստոնեաներ: Ընդունելով հանդերձ թէ աւանդութիւնը կը չափազանցէ անոնց թիւը, երբ նա միայն երկու առաքեալներու շրջանին նահատակուողները 3400 առձ կը հաշուէ, ընդունելով իսկ թէ մարտիրոսներու կեանքի եւ մահուան պարագաներու մասին պատմութիւններուն կարեւոր մէկ մասը շփոթ եւ անվաւեր է, դարձեալ կը համարձակինք ըսել թէ հազարաւորներու կը հասնի թիւը այն հայ սուրբերուն, որոնք առաջին երեք դարերուն զոհած են իրենց կեանքը Քրիստոսի սեղանին վրայ: Կը համարձակինք նաեւ ըսել թէ անոնցմէ ոմանց մասին մեզի հասած աւանդութիւնները գէթ իրենց էական գիծերուն մէջ ճշմարիտ են:

Ուստի յիշենք անոնցմէ մէկ քանի հատին մարտիրոսացման պարագաները, ըստ կարելւոյն համառօտ:

4. Սանդուխտ կոյս — թաղէոսի քարոզով Քրիստոսի համար շահուող առաջին հայ հոգիներէն մ'ըն է Սանդուխտ, չքնաղ զուստը, Արտազուկուսակալ Սանատրուկի: Ասոր բարկութիւնը կը բորբոքի իր աղջկան դարձին վրայ, սպաննել կուտայ շատ մը հաւատացեալներ եւ բանտ կը նետէ Սանդուխտը: Ատեն մը ետք հոն կը զրկէ իշխան մը՝ անոր բերնով համոզելու աղջիկը որպէսզի նորէն իր հայրերուն կրօնին դառնայ: Բայց ճիշդ հակառակը կը պատահի: Աղքըւած կոյսին ջերմ, երկնային հաւատքէն ու նուիրումէն իշխանը ինք եւ իր 50 ընկերները

կը դառնան Քրիստոսի ու կը նահատակուին: Ապա Սանդուխտ իր հօր առջեւ կը կանչուի, բայց Սանատրուկի ոչ խոստումներն ու աղաչանքները եւ ոչ ալ սպառնալիքները չկրցին ուրացման մղել սուրբ կոյսը, որ «աւելի աղէկ սեպեց Աստուծոյ ժողովուրդին հետ չարչարուիլ, քան թէ մեղքին ժամանակաւոր զուարճութիւնները վայելիլ, եւ աւելի մեծ հարստութիւն սեպեց Քրիստոսի նախատինքը» (Երբ. ԺԱ. 25, 26) քան թէ հօրը տան փառքը, զանձերը, շքեղ հանդերձները եւ ազամանդեայ ու օսկեղէն զարդարանքները: Վերջապէս Սանդուխտի սպանման վճիռը կը տրուի, սակայն հրաշքներ տեղի կ'ունենան և սխալմամբ դահճապետը կը զարնուի և ժողովուրդէն 2000 հոգի եւս կը հաւատան ու կը մկրտուին: Իսկ Սանդուխտ կը նահատակուի կուրծքէն զարնուելով: Անոր գեղեզմանը կը ցուցուի այժմ Նարեկի վանքին մէջ⁽¹⁾:

Ինչպէս Ս. Ստեփանոս քրիստոնէական եկեղեցւոյ նախավկան է, հաւանաբար Ս. Սանդուխտ կոյսն ալ նախավկայուն է: Թէեւ նա շատ կարճ, ոմանց դադափարով միայն 12 տարու կեանք մը ունեցած է, բայց դեռ հիմա ալ իր մահէն 19 դարեր յետոյ, կ'ապրի: Իր անձնագոհ սէրը առ Քրիստոս եւ իր հրաքորը, անշահախնդիր հաւատքը Անոր վրայ՝ իբր օրինակ ծառայած է բազմաթիւ հայուններու եւ քաջալերած զանոնք իրենց նահատակութեան ճամբուն վրայ: Մեր Տէրը գիտէ իր հաւատարիմ զաւակները նաեւ այս աշխարհի վրայ երկար ապրեցնելու եւ փառաւորելու արուեստը:

2. Սուրբ Ոսկեանք եւ Սուքիասեանք — Առաջինները 5 անձեր էին. այդպէս կը կոչուին իրենց առաջնորդին Ոսկիի անունով: Հաւանաբար Հռովմայիցիներէն պաշտօնով Հայաստան եկած, հոս ծանօթացան թաղէոս առաքեալի եւ աղքուած անոր հրաշքներէն ու քարոզներէն՝ դարձի եկան ու մկրտուեցան: Քիչ ետք հալածանքի պատճառաւ ապաստանեցան Ծաղկէոյ լեռները՝ Երբեմն երբեմն անկէ վար կ'իջնէին ու կը քարոզէին: Աւանդութեան համաձայն անոնց վկայութեամբ քրիստոնէական լոյս հաւատքին կ'առաջնորդուին 19 ալան իշխաններ, հայոց Արտաշէս Բ. թագաւորի կնոջ՝ Սաթենիկի ազգական

.....

(1) Դիւ. Օրմանեան, Ազգապատում, Ա. էջ 26 եւ 36: Ընթերցողին մասնաւորապէս կը յանձնարարենք երբեմնի որբազան պատրիարքին այս լուրջ երկը, որմէ եւ ալ օգտուած եմ մեծ չափով այս յօդուածաշարի 9. կ.

ները: Ասոր վրայ թագուհին ու իր որդիները կը զայրանան մասնաւորաբար Ոսկեանց զէմ խորհելով թէ անոնք կախարդական միջոցներով իրենց ազգականներուն միտքը դարձուցած են: Երկու արքայորդիները կ'երթան մինչեւ Ծաղկէղ լեռները եւ կը նահատակեն հինգն ալ՝ սրով կտրելով անոնց գլուխները:

Ասոնցմէ ատեն մը ետք նահատակուած են նաեւ վերոյիշեալ աւան իշխանները, որոնք իրենց զխաւորին մկրտութեան անունով կը կոչուին Սուքիասեանք: Աւանդութեան համաձայն ասոնք քրիստոնէութիւնը ընդունելէն յետոյ դեռ ատեն մըն ալ կը մնան Արտաշէս Բ-ի պալատան մէջ: Ապա վախճալով թէ չպիտի դիմանան փորձութեան՝ կը ձգեն արքունիքը եւ կ'առանձնան Բագրեւանդի (Ալաշկերտ) Զրաբաշխ կամ Սուկաւէտ լեռներուն վրայ: Շուրջ 44 տարի կ'ապրին հոն զրկուած կեանք մը՝ կերակրուելով զխաւորաբար բուսեղէններով, ինչ որ ինքնին մեծ զոհողութիւն էր փափկակեաց պալատականներու համար: Յետոյ Ալանաց թագաւորին Բաղազազ Գորավարը կը հետապնդէ զիրենք ու կը գտնէ: Երբ չյաջողիր խոստումներով զիրենք դարձեալ հեթանոսութեան հրապուրել, կը սկսի չարչարել, — զանոնք ցիցերու կը կապէ ու կը ծեծէ եւ ապա անոնց կողերը այրել կուտայ: Սակայն Ս. Սուքիաս եւ իր 16 ընկերները աղօթքով զօրացած հաւատարիմ կը մնան իրենց հաւատքին մէջ՝ հակառակ իրենց խուժողութ տանջանքներուն եւ վերջապէս կը մարտիրոսանան սրով սպաննուելով: Այս զէպքը պատահած է հաւանաբար երկրորդ դարու սկիզբը:

Սուրէն կ'ազատուին Բիայն երկու սուրբեր, Յակոբոս եւ Թէոդոս, որոնք Բաղազազի եւ միւս զահիճներուն հեռանալէն ետքը կը թաղեն իրենց ընկերներուն մարմինները եւ կը շարունակեն իրենց սուրբ կեանքը: Քիչ ետք ասոնց շուրջ Սուկաւէտի լեռներուն վրայ կը խմբուին ուրիշ քրիստոնէաներ: Ասոնց թիւը հետզհետէ այնքան կը բազմանայ որ երրորդ դարուն վերջերը, Տրդատ թագաւորի հալածանաց ատեն 364 նահատակներու խումբ մըն ալ կը նահատակուի:

3. Թէոդորոս Սալահունի — Սուկաւէտի այս վերջին նահատակաց ժամանակակից է թէոդորոս Սալահունիի մարտիրոսացումը: Սա իր ծննդեան անունով կը կոչուէր Աթենադորոս եւ որդին է Սուրէն նախարար Սալահունիի, որ կը բնակէր Դերջան գաւառի Սուրէնաշէն աւանին մէջ: Աթենադորոս 15 տարեկան պատանի մըն էր եւ հիւանդոտ: Մայրը, Ազուլիթա մասամբ

զութէ եւ մասամբ իր որդւոյն բուժմանը փափաքէն մղուած իր տան քով փոքր հիւանդանոց մը հաստատած էր անտէր ցաւագարներուն համար: Երբ Գրիգոր Լուսաւորիչ շղթայուած Երզնկայէն Արտաշատի վերապը կը տարուէր, հանդիպեցաւ Սուրէնաշէն, ծանօթացաւ Աթենադորոսի եւ բժշկեց զայն: Ասոր վրայ Ազուլիթա եւ Աթենադորոս դարձի եկան եւ մկրտուեցան: Այդ ատեն պատանւոյն անունը փոխուեցաւ եւ կոչուեցաւ Թէոդորոս: Հայրը Սուրէն շատ զայրացաւ կնոջ ու որդւոյն դարձին պատճառաւ թէոդորոս հօր բարկութենէն փախաւ ու պահուեցաւ Սեղեմնուտի ձորին մէջ: Երկար փրնաւորութեք ետք Սուրէն գտաւ զայն եօթներորդ օրը եւ իր ձեռքով իսկ խողխողեց իր զաւակը, երբ տեսաւ որ անկարելի է զայն աստուածներուն դարձնել:

Սանդուխտի նման թէոդորոս Սալահունին ալ շատ կարճ ապրած է, միայն 15 տարի: Բայց իր գեղեցիկ մահովը այնքան հիանալիօրէն փառաւորած է մեր Փրկիչը, որ իր յիշատակը մինչեւ այսօր ալ թարմ կը մնայ հայ սրտերու մէջ: Հին յոյները գեղեցիկ մահ կը նկատէին հայրենիքի համար մեռնիլը, պատերազմի դաշտին վրայ: Ուստի որքա՛ն աւելի գեղեցիկ մահ է մեռնիլ թագաւորաց թագաւորին, սիրոյ եւ ճշմարտութեան մարմնացումը հանդիսացող Քրիստոսի համար: Իցի՛ւ թէ Սանդուխտի ու Թէոդորոսի օրինակները այսօր ալ հրավառեն հայ օրիորդին ու երիտասարդին հաւատքը, յոյսն ու սէրը եւ զանոնք մղեն հեռի գետնաքարշ ու վաղանցուկ կիրքերէն դէպի քրիստոնէական շինջ ու վսեմ եւ յաւիտենական կեանքը, դէպի Յիսուս:

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՅԻ ԱՌԹԻԻ

Վարդանի վկայութիւնը. — «Եթէ իմ ծառայութիւնս կ'ուզէք, ահա պատրաստ եմ, իսկ եթէ հաւատքս խախտել կ'ուզէք, այդ անհնարին է, քանզի ան որ մանկութենէս ի վեր ստացած եմ Աստուծմէ, ինչպէ՞ս կարելի է ձգել եւ կամ մարդոց վախէն ուրանալ զայն...: Ինչ որ Աստուծմէ ընդունեցի եւ Անոր բերնէն սորվեցայ, չեմ կըրնար ծախել սնոտի փառքի համար...: Պատրաստ եմ մեռնիլ, քան թէ ուրանալ ու ապրիլ առանց Աստուծոյ»:



ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԱՆՃԱՆԸ

Բարիդի բազմամարդ փողոցներէն մէկուն մէջ, ձմեռուան շատ ցուրտ օր մը, պարոն մը օթօպիւսը մտաւ ու պզտիկ տղու մը քովը նստաւ: Տղան ցուրտէն կը դողար ու իր դեղնած դէմքը ուրիշներուն կարեկցութիւնը կը շարժէր:

— Պաղէն շատ կը նեղուիս, խեղճ պզտիկ, ըսաւ ճամբորդը. անշուշտ անպաշտպան մէկն ըլլալու ես:

— Շիտակ է թէ՛ կը մտիմ հիմա, բայց ես թշուառ մէկը չեմ պարոն, պատասխանեց պզտիկը ժպտելով:

— Ի՞նչպէս, ուրեմն աղքատ մէկը չէ՞ք, հարցուց օտարականը:

— Օ՛, ո՛չ, եթէ հիմա կը մտիմ ալ, շուտով տուն պիտի հասնիմ, եւ հոն տաք է, քառորդ ժամուան մէջ պիտի մոռնամ ցուրտը որ հիմա կը զգամ:

— Իրաւունք ունիս, պզտիկս, ըսաւ անծանօթը: հազար անգամ իրաւունք ունիս ներկայէն չյուսահատելէ, քանի որ ճամբուդ վախճանը այնքան երջանիկ է: Ինծի մեծ դաս մը կը սորվեցնես որ երբեք չպիտի մոռնամ:

— Ե՛ս, հարցուց տղան շուարած:

— Քեզի բացատրեմ, յարեց բարեկամական ձայնը, ես ալ ճամբորդութիւն մը կ'ընեմ որուն վախճանը հրա տանը մէջ պիտի գտնուիմ, ուր ամէն ինչ զիս կատարեալ երջանիկ ընելու համար պատրաստուած է: Բայց յաճախ կը մոռնամ այդ բարեբաղդութիւնը ու կ'զբաղիմ ներկայիս ճամբորդութեան դժուարութիւններովը:

— Իրա՞ւ, ըսաւ տղեկը զարմացած, եւ աւելցուց, ուրեմն քու ճամբորդութիւնդ իմինչէս շատ աւելի երկար ըլլալու է:

— Իրապէս տարիներէ ի վեր կը տեսէ:

— Ինչպէ՛ս, կարելի՞ է, ես չպիտի ուզէի այնքան երկար առէն տունէս հեռու ըլլալ, ուստի չեմ զարմանար որ ճամբան քեզի այսքան երկար եւ յուսահատական կը թուի:

— Ես ալ քեզի պէս պիտի փորձեմ ճամբորդ վերջը մտածել, եւ այն առէն յուսով ուրախ պիտի ըլլամ:

— Ձեր երկիրն ալ այսքան ցուրտ կ'ըլլա՞յ, հարցուց տղան:

— Ոչ երբեք, միշտ օդը զեղեցիկ է ու լուսաւոր, հոն ոչ վիշտ, ոչ ցաւ կայ, եւ այնքան զեղեցիկ բաներ կան, այնքան կատարեալ որ Բարիդի մէջ գտնուած ամենալաւ բաներն ալ բաղդատամբ անոր քով ոչինչ են: Եւ այդ զարմանալի երկիրն մէջի բոլոր ժողովուրդը սիրով լեցուած են մէկը միւսին հանգէպ ու միշտ երջանիկ են:

Ո՛հ, պարոն, որչա՛փ կը փափաքէի ձեզի հետ այդ երկիրը երթալ:

— Լուծֆիկ, սիրելի Լուծֆիկս, լսուեցաւ յանկարծ, եւ ձեռքի տրուած շարժումով մը ծանր կառքը կեցաւ ու պզտիկը առանց դանդաղելու իր նոր ծանօթին վերջին մնաք բարին ըսելով վար իջաւ կառքէն:

Անծանօթը կայարանը տեսաւ մաքուր հագուած երիտասարդ կին մը, որ անմիջապէս զըրկեց պզտիկը ու համբուրեց զան:

Հիմա հետեւինք մեր պզտիկ բարեկամին որ հանգիստ եւ տաք խոհանոցին մէջ, մօրաքոջը պատրաստած լաւ կերակուրներովը եւ կրակարանին ջերմութիւնովը մոռցած ճամբու դժուարութիւնները, սկսաւ հաճոյալի կերպով պատմել օտարականին հետ ունեցած խօսակցութիւնը, վերջացնելով այսպէս. —

— Դժբաղդաբար ժամանակ չունեցայ հարցնելու այդ զեղեցիկ երկրին անունը:

— Ցաւալի է, ըսաւ քաջ կինը, բայց կը խորհիմ թէ ես քեզի կրնամ ըսել անունը:

— Իրա՞ւ մօրաքոյր:

— Անշուշտ սիրելիս, որովհետեւ որոշապէս գիտեմ որ ես ալ օր մը հոն պիտի երթամ:

— Դո՞ւն, մօրաքոյր:

— Այո, պզտիկս:

— Ո՛հ, ի՞նչ բարեբաղդութիւն, այն առէն ես ալ կրնամ քեզի հետ երթալ:

— Ուշադրութեամբ ինծի մտիկ քրէ Լուծֆիկ, եւ թերեւս դուն ինքդ հասկնաս թէ որ երկիրն է: Շատ անգամներ իմ լալս տեսար, անանկ չէ՛. այդ զեղեցիկ երկրին մէջ ալ չպիտի լամ: Դիտես որ քու մայրիկիդ մահուանը վրայ որքան տխրեցանք. հոն ա՛լ վիշտ, սուգ, մահ պիտի չըլլայ Դիտես ու կ'զգաս որ երբեմն ես շատ յոգնած ու հիւանդ եմ, հոն ո՛չ յոգնութիւն, ոչ ալ նեղութիւն պիտի ըլլայ: Հոս շատ անգամներ գէլ խօսքեր կը լսենք ու չար գործեր կը տեսնենք: Իսկ այն հիանալի երկրին մէջ չարութիւն երբեք չպիտի ըլլայ եւ ոչ ալ ցաւ կամ վիշտ:

— Բայց մօրաքոյր...

— Մտիկ ըրէ տակաւին զաւակս: Ես գիտեմ թէ դուն որչափ շատ կը սիրես երգել: Այն երկիրը որուն վրայ քեզի կը պատմեմ, ձայները ներգաշնակ պիտի ըլլան եւ բոլոր երգերը գովարանութեան եւ օրհնութեան երգեր պիտի ըլլան: Դարձեալ գեղեցիկ տուներ տեսնել կը սիրես, հոն կը գտնուի ոսկի քաղաքը, որուն երկրաչափը Աստուած ինքն է, ու քարերը որոնցմով շինուած է այս քաղաքը, թագաւորներուն զուլիսի թագերը շինուած քարերէն շատ աւելի պատուական են:

— Բայց մօրաքոյր...

— Դեռ մտիկ ըրէ սիրելիս, հոս մեզ տխրեցնողը միմիայն արտաքին աշխարհի բաները չեն, այլ մեր սիրտերուն մէջ գտնուած գաղտնի մտածումներն ալ են, իսկ այն երկրին մէջ միմիայն լաւ մտածումներ կան, հոն մենք կատարեալ, մաքուր եւ երջանիկ պիտի ըլլանք:

— Բայց մօրաքոյր, դուն երկինքի վրայ կը խօսիս:

— Իրաւունք ունիս, Լուծֆիկս, ես կը խօսիմ այն քաղցր տեղին վրայ, ուր բոլոր Յիսուս Քրիստոսի հաւատացողները ու Անոր արեանը ապաւինողները յաւիտենական հանգիստ ու խաղաղութիւն պիտի գտնեն: Եւ դուն չե՞ս խորհիր որ այն պարոնը որուն դուն հանդիպեցար այն նոյն տեղը ըսել կ'ուզէր:

— Բայց ճամբորդութիւն ըսելով ի՞նչ ըսել կ'ուզէր:

— Անտարակոյս մեր երկրային կեանքի ճամբորդութիւնը:

— Ա՛, հիմա կը հասկնամ: Ինք ինծի ըսաւ թէ ես իրեն բան մը սորվեցուցի, բայց ես հակառակ կը խորհիմ, թէ ինք է որ ինծի դաս մը տուաւ:

— Իրաւունք ունիս Լուծֆիկս, բայց քիչ առաջ ինծի չըսի՞ր թէ դուն ալ հոն երթալ կը փափաքիս, լրջութեամբ կըսես:

— Օ՛, այո, մօրաքոյր:

— Կը խորհի՞ս թէ արժանի ես այդ լուսաւոր երկիրը բնակիլ զաւակս:

— Ո՛չ, պատասխանեց պզտիկը կակազելով, ես միշտ տխուր եմ այդ խորհելով. բայց ինծի մօրաքոյր, ի՞նչ կրնամ ընել որ երկինք մտնելու արժանի ըլլամ:

— Դուն պէտք է ինծի եւ բոլոր փրկուածներուն պէս ընես, պէտք է որ մէկը գտնես որ քեզի իրաւունք տայ հոն մտնելու:

— Ուրի՞շ գտնեմ ես, մօրաքոյր:

— Միայն մէկ հատ կայ, ան ալ Տէր Յիսուս

Քրիստոս է, որ զարմանալի եւ կատարեալ գործ մը ըրաւ. քեզի, ինծի եւ բոլոր անոնց համար որ իրենց մեղքերէն ազատուելու համար Անոր փրկարար արեանը ապաւինեցան ու Անոր խաչին տակը խոնարհեցան: Մենք յաւիտենական կորուստի արժանի էինք մեր անթիւ մեղքերուն համար, բայց ինքը մեր տեղը զատապարտուեցաւ: Արդար, մքռաւր եւ կատարեալ եղած տեղը՝ մեր մեղքերուն պատիժը ինք կրեց: Աստուած գնահատեց խաչի մատնեց, խաչին վրայ իր արիւնը թափեց որ մենք անով մաքրուինք: Եւ բոլոր անոնք որ այդ արիւնին փրկարար ըլլալուն հաւատացած են, երկինքը պիտի ըլլան եւ հոն նոր երգ մը պիտի երգեն ըսելով, «Արժանի ես Դուն այդ գիրքը առնելու եւ ատոր կնիքները բանալու, վասնզի մորթուեցար ու մեզ ծախու առիր Աստուծոյ, Գու արիւնովդ, ամէն ցեղէ ու լեզուէ եւ ժողովուրդէ ու ազգէ»: Եւ նորէն, «Այդ մորթուած Գառնուկը արժանի է զօրութիւն ու հարստութիւն եւ իմաստութիւն ու կարողութիւն եւ պատիւ ու փառք եւ օրհնութիւն առնելու»: Դուն մէկ բան ունիս ընելու զաւակս, ան ալ է՝ հաւատքով դառնալ բարի Հովիւին, որ սիրեց եւ իր կեանքը տուաւ քեզի համար:

— Եւ յետո՞յ:

— Վերջը պէտք է հաւատաս իր խօսքին որ ըսաւ, «Ան որ ինծի կուգայ, բնաւ դուրս պիտի չհանեմ»:

— Եւ եթէ հաւատամ, ի՞նչ կը պատահի:

— Բոլոր մեղքերդ կը ներուին եւ երջանիկ սրտով կրնաս Յիսուսը սիրել եւ ամէն բանի մէջ Անոր կամքը կը փնտռես, քանզի երբ որ հաւատաս, իր Ս. Հոգին կուգայ սրտիդ մէջ բնակելու:

— Այո, մօրաքոյր, կ'ուզեմ Յիսուսի գալ եւ մեղքերուս համար ներում խնդրել, այսպէս ես ալ կրնամ երկինք երթալ քեզի եւ այդ բարի պարոնին հետ:

Սիրելի մանուկներ, դուք լաւ գիտէք որ Յիսուս ըսաւ, «Թող տուէք այդ մանր տղոցը որ ինծի գտն եւ մի արդիւնք ատոնք, վասնզի Աստուծոյ թագաւորութիւնը այդպիսիներունն է: Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ով որ Աստուծոյ թագաւորութիւնը պզտիկ տղու մը պէս չընդունի, բնաւ պիտի չմտնէ անոր մէջ» Մարկ. Ժ. 14, 15: Ուրեմն վայրկեան մ'աւելի մի սպասէք, Յիսուսի գիմեցէք, որպէսզի օր մը դուք ալ կըրնաք բոլոր փրկուածներուն հետ Տէրը փառաբանել երկնային քաղաքին մէջ, որ պատրաստած է զինքը սիրողներուն համար:

Թրգ. ՊԶՏԻԿՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՈՒՆԻ

ԵՐԳ ՊԱՏԱՆԵԱՅ ՀԱՄԱՐ ԵՒ ՄԵԾԵՐՈՒ ՅԱՐՄԱՐ

ԵՐԳ ՊԱՅԳԱՐԻ

Լեր վերցուցի, քերտ եմ ճաշ ԴԷՐ ըստ փորձի-թե՛ն և փոքի եղծեր մի մի տալ
 ինչպե՛ս հենց ա մար տակ
 Օհ, յառաջ և, երբ լսեմ ձեր աչքի անկի վեր
 Ուրախ մանկերս գտնեմ:

- 1 Լեր վերցուցի, քերտ եմ ճաշ
 ԴԷՐ ըստ փորձի-թե՛ն
 Եւ փորկեալներ միանալ
 Խըմբուին անոր տակ:

Օհ, յառաջ, սուրբ եղբայրներ,
 Հերոսաց պէս անվահեր.
 Զոհներ, զոհուինք մինչեւ ի մահ,
 Ուխտով մ'անվերապահ:

- 2 Խաչն է զըրօշը որուն տակ
 Մենք որպէս սուրբ բանակ,
 Հըրաւիրուած ենք անխընայ
 Պայքարիլ մինչեւ մահ:

Օհ, միանանք մէկ մէկու,
 Թըշնամին է ահարկու.
 Յաղթութեան լոկ մէկ պայման կայ,
 «Սիրել զիրար ցըման»:

- 3 Մեր Զօրավարն է Տէր Յիսուս,
 Սուրբ Գիրքն է մեզի լոյս,
 Աղօթքն է մեր զէնքը անդին,
 Մեր ուժն է Սուրբ Հոգին:

Օհ, զուրս վանենք քէն ու սխ,
 Մենք իրարու չենք ոտխ,
 Այլ եղբայրներ ենք անկասկած,
 Հուսոյ Հօրմէն ծընած:

- 4 Ի՛նչ փոյթ մեզի երբ Սատանան,
 Եւ կամ մարդիկ դաժան,
 Խօլ կատաղութեամբ մ'ահաւոր
 Մարտընչին ամէն օր,

Մեր Տէրն է ամենագոր,
 Յաղթութիւնն է փառաւոր,
 Բաւ է որ մենք հաւատարիմ
 Մընանք մինչեւ ի մահ:

- 5 Ո՛վ Տէր, լիցուր մեզ կըրակով,
 Բորբոքինք Սուրբ Հոգով,
 Անմահ հոգիներուն համար
 Խիզախենք անդադար:

Օհ յառաջ վառուած սիրով,
 Պայքարինք միշտ հաւատքով,
 Մեծ վարձք կալ ամէն յաղթողին,
 Հոգիներ շահողին: ՍԱՄՈՒԷԼ Պ.

ԱՅԱԽԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՅՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(հարանամիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԻ — Հովիտ՝ վեր. 3. Ե. Վաղարշապետ
7 Rue Papere.

Կիր. ժամը 10 քարոզածողով, 2 ր. Philippe de
11.30ին աղօթածողով, Girard

Կիր. դասեր մանկանց ժամը 8. 30ին նոյն տեղը
Սէն ժուլիէն, Լէզ Օլիվ, Ս. ժէրոմ Ս. Ան-
ժուան Եկեղեցւոյ աղօթատեղիին մէջ
Ս. Միքէլ. Այս մասնաւոր բնակարաններու մէջ
Շարանամիջի աղօթածողովներ

Դ. շր. ժամը 14ին Սէն ժուլիէն

Դ. շր. 20ին քաղաքը 2 ր. Phélippe de Girard

Ե. շր. ժամը 2ին Ս. Միքէլ

Ե. շր. ժամը 19ին Սէն ժէրոմ

Ուր. ժամը 2ին Սէն ժէրոմ

Սէն Լուի. — Քարոզիչ՝ Պատ. Վալիան Սափակեան
Chapel Evang. Armen. Bd. Escalon St. Louis

Կիր. ժամը 8 30ին մանկանց կիր. դաս:

10. 30ին Ս. գրական ուսումնա.

15 30 ին քարոզածողով

Սէն Թ. ՄԱՐԿԻՆ. —

Կիր. ժամը 14ին քարոզածողով

Սէն Լուի — Քարոզիչ՝ Պատ. Ս. Պապեապետ
11 Impasse des Muriers St. Luis

Կիր. ժամը 9ին կիր. դպրոց

ժ. 10ին աղօթածողով, ժ. 14.30ին քարոզ

Դ. շր. ժամը 20ին Աւետ. ժողով

Ուր. ժամը 20ին սերտողութիւն

ԼԱ ՍԻՌԵԱ. — Կիր. ժամը 9.30ին աղօթածողով
15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ — Հովիտ՝ վեր. Ա. Փափազեան
Pont d'Aubenas, (Ardeche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

Սէն Փիէր. —

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով և

աղօթածողով

ՄՕՆԹԷՆԻՄԱՐ. —

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարոզ և աղօթածողով:

ՎԱԼԱՆՍ. — Հովիտ Բրոֆ. Դ. Գ. Խալիկեան
2 r. du Colombier Valence (Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով ֆրանս.

Եկեղեցիին մէջ

ՌԱՅԱՆ.

Կիր. քարոզածողով:

ԼԻՐՔ — Հովիտ՝ վեր. Ժ. Պարսապետ,
18, Rue du Dr. Rebatel

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով

23 Rue le Royer

Այն քարոզածողով նոյն տեղը:

15 ին երեսասարդներու և երեսասարդու.

հինքու ժողով ամառն երկրորդ և. չոր.

րորդ կիրակներուն, նոյն տեղը:

ՏԷՍԻՆ. —

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՈՐԻՍ

Կիր. ժամը 10ին քննիչ և աղօթածողով:

ՎԻԷՆ. —

Կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏԷ ՇԷՐԻԿ. —

Կիր. քարոզածողով և աղօթածողով

(15 սրբ անգամ մը):

ՍԷՆԹ ԷՐԻԿ. — Քարոզիչ Պատ. Խ. Արախանեան
60 Rue Richelandière

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով

57 Rue de la République

17ին աղօթածողով

Արմէ տն. Սալիսի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՍ. —

Կիր. ժամը 14ին քարոզածողով

Մարշալ մէջ, Justice de la Paix սրահը

ԲԱՐԻՋ — Հովիտ՝ Պատ. Զ. Բ. Պատապետ,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 10 30ին քարոզածողով

11 Rue Jean Bart Ա. քաղ. Met. Rennes

Ամառն Ա. կիրակին ժամը 16. ին Ե. Ք. Բ. քա-
նախառնութիւն: Ամառն Գ. կիր. ժ. 16ին Ս. Ք. Բ.

37 Rue Tournesfort Paris 5 Metro Mouhe

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Moudon Ile St Germain

Issy les Moulinaux

ԱԼՖՈՐՎԻԼ. — Քարոզիչ՝ Պատ. Մ. Վէքիլեան
22ter Rue de Vitry Alfortville

Կիր. ժամը 9ին կիր. դպրոց

Կիր. ժամը 10ին պաշտամունք

Rue des Brochets, Alfortville

Երկու կիր. անգամ մը 7.30ին երկու խառն ժողով

ՐԵԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

Տ. Լ. Մուտիի կենսագրականը.—

Այս տարի Տուայթ Լ. Մուտիի ծննդեան հար-
իւրամեակն է։ Աշխարհի ամէն կողմերը, բոլոր
տոնեայ եկեղեցիներ պիտի
տօնեն այս Աստուծոյ ծա-
ռային յիշատակի օրը։
Թերթեր արդէն սկսած են
գրել ու փետրուար 5ն ալ
(Մուտիի ծննդեան օրը)
շատ մը տեղեր շուքով ան-
ցան։

Հոգեւոր թերթեր սիւ-
նակներ կը լեցնեն եւ իւ-
րաքանչիւրը ջանք կ'ընէ
նոր բան մը ըսել Մուտիի
կեանքէն։ Շատ ուրախ ենք
ասոր համար։ Աստուծոյ
այս ծառային համար որ-
քան գրենք այնքան քիչ է։

«Բանրեր»ն ալ իր բա-
ժինը կ'ուզէ բերել այս
տարուան Մուտիի հար-
իւրամեակին եւ կը խոր-
հինք թէ ամենալաւ բա-
ժիններէն մին։

Որոշեցինք Մուտիի կեն-
սագրութիւնը եթէ Տէ-
րը կամի, յառաջիկայ մէկ
երկու ամիսներուն ի լոյս
ածել։ Արդէն իսկ առաջին
պրակը շարունակու վրայ է։ Գեղեցիկ հատոր մը
պիտի ըլլայ գեղեցիկ պատկերներով զարդար-
ուած։

Կ'ուզենք միայն 1200 օրինակ հրատարակել.

Մամուլի ծանուցում.—
Ստացանք

ՇՆՈՐՀԱՅ ՅՈՂԵՐ : Հոգեւոր տարեգրքոյկ, Դ.
Տարի, 1937: Հեղինակ Լեւոն Ս. Սիմոնեան: Գին
երկու ֆրանք: Դիմել L. Simonian, 28 Rue des
Petites Maries, Marseille (France)

ԽՕՍՆԱԿ : Բ. հատոր, որուն առաջինը անցեալ
տարի հրատարակուեցաւ եւ թերթիս միջոցաւ
ծանուցուեցաւ: Պարունակութիւն՝ քաղաքական,
եղբայրական ասուլիս, մ. հրմասութիւնք, ներառ-
բումի պահեր: Հեղինակ Յ. Ս. Ֆէրմանեան: Յանձ-
նարարութեանց համար դիմել A. Der Agopian,
17 Rue Damesme, Paris.

ԱՅՐՈՒԲՆԵՐԻ ԾԱԿՈՒՄՆ ՈՒ ԱՐԴԻՆԵՐԸ : Հեղի-
նակ Կ. Ս. Ֆարաճեան, գին 25 տրախմի կամ

այս պատճառաւ հիմակուքնէ կը խնդրենք մեր
սիրելի ընթերցողներէն կարելի եղածին չափ
շուտ ապսպրել օրինակ մը կամ օրինակներ: Գի-

նը առայժմ չենք գիտեր,
բայց չենք կարծեր որ
կէս տօլարէն աւելի պիտի
ըլլայ, թերեւս աւելի պա-
կաս եւ Ֆրանսայի ու Սուր-
իոյ համար հինգ ֆրանքէն
ոչ աւելի:

Անցեալին մէջ Օրացոյ-
ցին համար ալ ժամանա-
կին ծանուցինք եւ տեսանք
թէ մի քիչ ուշ ապսպրող-
ներու ստիպումով էինք ան-
գոհացուցիչ պատասխան
տալ քանզի սպառած էին:

Ուրեմն այս վեց ամսը-
ւան մէջ Մուտին թող
մտնէ «Բանրեր»ի մեծ ըն-
տանիքին բոլոր յարկե-
րուն մէջ ու անոնցմէ ալ
անդին: Տէրոջը անունը
կ'օրհնենք Անոր տուած
այս պատեհութեանը հա-
մար:

Աղօթքեր ենք եւ կ'աղօ-
թենք որ Անիկա Մուտի-
ին հոգիներ շահող տաք
հոգիէն այս ժամանակ-

ՏՈՒԱՅԹ Լ. ՄՈՒՏԻ

ուան բոլոր հոգիներուն սրտին մէջ ալ առատա-
պէս հոսեցնէ:

Ձեզի ուրախակից եղբայրները Տէրոջը դոր-
ծին մէջ:

ԽՄԲ. «ԲԱՆՐԵՐ»Ի

50 սէնթ: Դիմել հեղինակին՝ G. S. Faradjian,
72 Rue C. Paleologhou, Saloniki (Greece).

ՖՈՒԹՊՈՒ : Հեղինակ Մ. Եանըգեան, 50 սէնթ,
Դիմել M. Yanekian, 2464 Grand Concourse,
New York, N. Y.

ՈՒՂԵՑՈՅՑ ՄԱՐՍԷՅԼԻ : Թ. Տարի 1937, Հեղինակ
Յ. Վարժապետեան:

ՊԱՏԱՆԵԱՆ ԱՐՁԱՎԱՆԳ : Երկշաբաթաթերթի
Բաժնոց. Սուրիա, Լիբանան եւ Ֆրանսա տարեկ.
20 ֆր. արտասահման 25 ֆր. կամ մէկ տօլ. 40:
Հասցէ M. H. Shnorhokian, American Press,
Beirout (Libanon)

ԱՐԵՒԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ : Եւրոպական ձայնագրու-
թեամբ. հրատարակից Գէորգ Աճէմեան. գին 3 ֆր.
Դիմել Catholicossat Arménien Antelias, Liban.